Եւ մեզ պատուիրան նոր աւանդեաց , թէ * Զգուշ լերուք , գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ , և հոգւովք աշխարհակա-նօքն || : և թէ՝ * Յորժամ պահիցես՝ օծ զգլուխ քո , և այլն || : Աւրեմն սխալին ոմք ասեն՝ թէ ոչ էն պատուիրեալք Յաստուծոյ յաւիտեան պահք , ուր թէ և ամ Աստուածայինք , Նախահայրք , Մարգարէք , և Առաքեալք , զպահան սրբութեամբ պատուիրեալ հանապազորդէին ՚ի նոյն :

Երկրորդն առաքութեան նոցին թէ՝ Այլ զամ ըստ ախորժակաց պատուիրեալ է , ոչ զբանջար խոտոյ ուտել անխտիր : Այս ըստ Դաւթի անյաղթ փիլիսոփային՝ Բոլորն ընդհանուր է քան զԱմենայն . զի ՚ի հրամայելն Աստուծոյ թէ՝ յայմ ծառոյ ուտելով կեցցես , ոչ պատուհասակեաց և զծառն գիտութեան բարւոյ և չարի , այլ որոշեցաւ յԱմենայնէն յասելն՝ բայց ՚ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի մի՛ ուտիցէք , բամնաւորակի դիմօք : Այսք յայտ յանդիման առանի , թէ ոչ որպէս նարդեննիս ՚ի մէջ մեղեաց և ընդեղինաց՝ յայնժամ Աստուած արար խտրութիւն և որոշումն կէրլեաց . այլ կրկնապատիկ զգուշաւորութեամբ առ Արմատան մեր յԱդամ և յԵւայ :

Ծառոյն ՚ի պտղոց ծառոց զծառն գիտութեան որոշեաց , զի մի՛ ՚ի բոլոր ծառոց վայելեցեն զպտուղ , այլ թողեն զմին յայլոմ ժամանակի ուտել , յորում վայել նախահաւն ըստ Հնորհալւոյն և Մագիստրոսի . * Մեայն ՚ի գիտութեան ծառոյն հրաժարէին , այլ ՚ի դէպ ժամու յուտելն Աստուած մերձենային || :

Երկրորդապէս՝ զպտուղս ծառոց բաց ՚ի մէնն , և զբերմանելն խոտս ՚ի վայրենի դալար խոտոց որոշմամբ , զպտուղն և զբերմանելն մեայն հրամայէ ոյ

ուտել. իսկ զվայրի դալար խոտան յայնժամ անասնոց եթող ի կերակուր։ Ո՛չ գրի յարտշապատուճն այսպէս ,, Եւ ասաց ած. ահաւադիկ ետու ձեզ զամ ,, խոտ սերմանելի սերմանել սերմն ըստ ազգի և ըստ ,, նմանութեան, որ է ի վերայ ամ երկրի. և ամ փայտ ,, որ ունիցի յինքեան պտուղ սերման սերմանելոյ , ,, ձեզ լիցի ի կերակուր։ Եւ ամ գազանաց երկրի , ,, և ամ թռչնոց երկնից , և ամ ամենից որ սողին ի վր ,, երկրի՝ որ ունիցի շունչ կենդանի. և ամ խոտ դա- ,, լար ի կերակուր. և եղև այնպէս (ծնն. ա. 29. 30)։

Ա. յապիսիք էին յանմեղութեան ժամանակի նախնոյն մեր կերակուրք , և անասնոցն որոշակիք։ Իսկ զկնի մեղանչականութեանն , որոշեալք և՛ ի պտղոց ծառոց՝ ընդ անասնոցն հաւասարեցան կերակուրք խոտեանց. զի ասէ՝ * փուշ և տատասկ բուսուսցէ քեզ. և կերիցես զբանջար վայրի. քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո (ծնն. ճ. 18. 19)։

Ա. յաւանօր ևս եղև երկրորդ պահք Աբրահամայ մերոյ՝ որ արգելան և՛ ի պտղոց ծառոց դրախտին , կարօտք ճնացեալք անաշխատ վայրին. * Եւ եհան արձակեաց զնա տէր Աստուած՛ ի դրախտէ անտի վայելուչութեան՝ գործել զերկիր ուստի առաւ. . . և հրամայեաց քերոբէից և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհ ծառոյն կենաց (ծնն. ճ. 23. 24)։ Ա. ըդ որոշեցան իրականապէս զանազան ժամանակ, և զանազան կերակուրք. այլ կերակուրք անմեղութեանն , և այլ՛ ի մեղանչականութենն. որպէս և՛ ի մեզ՝ այլ յաւուրս ապաշխարութեանց , և այլ զկնի ապաշխարութեանց։

Ա. ըդ եօք կարծն և առ այս ժխտել, թէ ոչ են պատուէրք յԱստուծոյ պահեցողութիւնք պահոց, երբ տեսանեն փոխանակ միոյ՝ երկից հետացուցեալ զնախնեան՛ ի կերակրոց. առաջնումն՝ ի միոյ ծառոյ գիտութեան բարւոյ և չարի. և յերկրորդումն՝ յամ ծառոյ պտղոյն, մանաւանդ՛ ի ծառոյն կենաց արգելան նախ-

նիք մեր։ Ուր թէ՛ ի դրախտին, և թէ՛ յարտաքսեցման՝ ոչ միայն ի սերմանէս և ի պտղոց ունէին հրաման՝ ուտել. զայդ մի և իւղ՝ ոչ բնաւ. զի յայնժամ ոչ էր հրամայեալ նոցա ուտել զմսեղէնս մինչև ցջրհեղեղն։

Ապա վասն վճռեն և նարդի իմաստուն և բժիշկքըն, թէ երկարակեցութիւն նախնեաց առաւել պատճառեալ էր ի պահեցողութենէ մսեղեաց։ Եւ մանաւանդ թուխիւնն համարեցաւ պատիժ բնութեան։ Վասնզի յառաջ քան զմսակեր լինիլն մարդոյ, ի տուրըն գիրս առանին ինն հարիւր և աւելի ամօք ապրիլ մարդկանց, յետ խառնակերութենց օր ըստ օրէ նուազելով կենաց, ի մարգարէէն վճռեցաւ եօթանասուն կամ ութսուն ամ, և աւելին քան զայն ցաւօք և հեծութեամբք (սաղ. ձթ. 10)։

Տեսաք, թէ մինչև ցնոյ յետ ջրհեղեղին, էր աշխարհ ամ իւր չորապահք, որ ուտէին զընդեղէնս և զվայրի պտուղս ծառոց։ Տեացուք և զհրամանն առ նոյ, որ ասէ՝ ,,Եւ ամ զեռուն որ կենդանի, ձեզ ,,լիցի ի կերակուր. իբրև զբանջար խոտոյ ետու ձեզ ,,զամ։ Սակայ զմիս արեամբ շնչոյ մի ուտիցէք. քանզի ,,և զձեր արիւն շնչոյ խնդրեցից, ի ձեռաց ամ գազա ,,նաց խնդրեցից զնա, և ի ձեռաց մարդոյ. ի ձեռաց ,,ամն զշունչ արեան եղբօր իւրոյ խնդրեցից (ծնն. թ. 3—5)։

Ո՛չ երկբայիմ, թէ այնք՝ որք իբրև ի զօրեղ ապաստանարան կենեալք էին ի հրամանն, թէ իբրև զբանջար խոտոյ ետու ձեզ զամ, այժմ ի նրբաթափս նկատեն իւրեանց յուսացեալ հրամանն, թէ յետս կացցեն յառաջին խորհրդոց և ուսմանց իւրեանց։ Ո՞ զի առաւել ևս առ ամենեսեան, թէ Մխով ծաղկով ոչ լինի գարուն, և ոչ միով նախադասութեամբ՝ եղբակացութիւն. այլ պարտ է հետևեցելոյն շրջահայեաց լինիլ առն իմաստնոյ։ Ո՞վ ի ահա ուր հրամայի իբրև զբան-

ջար խոտոյ, անդ նշանակին տեսակաւ այսպէս * Ամենայն զեռուն որ ի կենդանի, ձէզ լինի ի կերակուր իբրև զբանջար խոտոյ||:

Թուր Թէ՝ ոչ ընդդիմաբանեն բնութենին երկիւղած անձինք, որ զկնի աշխարհակործան ջրհեղեղին, երբ ամպ ողջոյն՝ երկրորդ հայրն աշխարհի նոյ ի տապանի եկաց ծնաց, և յետ ելանելոյն ոչ խակ և խակ եղև ծննդաբերութիւն երկրի ի տուժանաց լճակաց և ալմոց · զի գրեալ է, * Ջրիջանէր տակաւ, երթայր ջուրն և թուլանայր յերկրէ (ծնն · ը · 3):

Ուրեմն երկիր էր ըստ առաջնոյն՝ աներևոյթ և անպատրաստ ի բեղմնաւորել զսերմանիս և զբանջարս, միայն առ ձեռն պատրաստ ի դարման մարդկանց կայրին յայնժամ ձկունք և զեռունք, որք ունէին զշունչ կենդանի · յորոց հրամայեցաւ ապրելոցն ի տապանին՝ ուտել անխտիր ի տեղի բանջարաց, մինչև պատրաստեսցէ երկիր զնուրն բեղմնաւորութեն ըստ առաջնոյն: Բայց հանգամանայն եղաւ անդանօր և քստմնելի որ գեղանս, Թէ * Զմիս արեամբ հնչոյ մի ուտիցէք · քանզի և զձեր արիւն խնդրեցից ի ձեռաց ամ գազանաց||:

Այսպա որբեն ընդարձակութեն զամ իբրև զբանջար խոտոյ ուտելն նոյի, երբ արգելու և ի նմանէ ոչ ուտել զմիս արեամբ հնչոյ, և որպէս ի պատուիրանատուութեանն առ Ադամ · մահն տուգանք եղաւ նոյ, Յորում աւուր ուտիցէք, մահու վախճանեսջիք: Նոյնպէս և առ նոյ, Զի Թէ ուտիցէք զմիս արեամբ հնչոյ, և զձեր արիւնդ խնդրեցից ի ձեռաց ամ գազանաց: Այլ՝ որ սատց ահ և երկիւղ ձեր եղիցի ի վր ամ գազանաց երկրի, և ի վերայ ամ թռչնոց երկնից, և ի վր ամ զեռնոց երկրի, և ի վր ամ ձկանց ծովու · մերձ նմին ասէ՝ զարիւն ձեր խնդրեցից ի ձեռաց ամ գազանաց, զի Թէ ուտիցէք զմիս արեամբ հնչոյ:

Այսպա յամ ժամանակի եղեալ է և ի պահոց պատուէր յանասունոյ առ մարդիկ հանդերձ օգտակարու-

թեամբ, զի թէ Ադամ ոչ էր ձաշակեալ զարգելեալ պտուղն, շարունակ վայելէր ի ծառոյն կենաց. երբ առ և եկեր զարգելեալ պտուղն, վաղվաղակի փակեցան ճանապարհք ծառոյն կենաց, և կերակուրք նոցա եղեն ըստ անասնոց՝ քանջարք վայրենիք փոխանակ փափկուե դրախտի պաղոց ծառոցն։ Նապատի դարմանովք զարգացեալ նոյի՝ գտաւ այր արդար ի ժամանակի իւրում, ըստ որում այլք ըստ հաճոյս իւրեանց ուտէին և ըմպէին, քառնապատեալք ի կրից քնութեանց՝ կանայս առնէին, և արանց լինէին, մինչև եկն ջրհեղեղն, և եքարձ զամենեսին (Ծած. իդ. 38. 39)։

Այլ ինչ յայտնի զօգուտ և զշնաս ցուցանել պարտ է մեզ Աստուծոյ՝ քան զվերոյգրեալն, երբ մոյն պահեցողութիւն վերակոչէ զինքն այր արդար յայզի իւրում, և կացուցանէ զնա երկրորդ հայր աշխարհի, և քազմաց որկորաժէտութիւնք ջրասոյզ առնեն յայնս զակատեալս։ ԵՒաւ նոյն վկայեալ և փորձեալ անձն նոյ՝ իւրովք վերատին պարփակի նոր պատուքանաւ՝ ոչ ուտել զմիս արեամբ հնչոյ։

Որպէս կամք են վարդապետաց մեկնել զայս քան՝ ոչ ուտել զմիս արեամբ հնչոյ, ունին զտեղի. քայց ըստ տեղւոյս վայելչութեան և ըստ ժամանակիս տուչութե սուրբ Հոգւոյն՝ նուաստութեան իմոյ թուի, վատահաբար ասել։

Մոկ որքան մարդիկ զգուշք էին չուտել զմիս կենդանեաց, որք ընդ արեանն ունէին և զշունչ, այլ շատանային միայն զեռնովք, որք միայն ունէին զշունչ՝ և ոչ ըստ անասնոց կատարեալ արիւն. յայնժամ ոչ էր պատերազմունք և կռիւք, յառնելով ազգ յազգի վր, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ։ Իսկ երբ սկսան ուտել անխտիր զամ կենդանիս և զազանս վայրիս, և զթռչունս երկնից, նաև զարիւն կենդանեաց, զգեցան զբարս և զդիցազութիւնս նոցա, և եղեն մարդակերք։ Ոմն իւր վճռաբար հրամայէ պատուի-

զանազանքն յետ հրամայելոյն՝ թէ * խնդրեցից զարիւն նոցա ՚ի ձեռաց ՚ամ գազանաց։ ՚Ետևեցուցանէ ըստ ներկայ ժամանակիս բերման * եւ ՚ի ձեռաց մարդոյ, և՚ի ձեռաց ա՛ն զշունչ եղբօր իւրոյ խնդրեցից։ և թէ՝ * Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա՝ հեղցի արիւն նորա։ Եւ առաքեալն Յակոբոս հարցականաւ ուսուցանէ զմեզ. * Ուստի պատերազմունք՝ և ուստի կռիւք ՚ի ձեզ. ո՞չ յայդպիսի ցանկութեանց ձերոց՝ որ զօրացեալ են յանդամս ձեր. ցանկայք, և ո՛չ ունիք. սպանանէք և նախանձիք, և ո՛չ կարէք հասանիլ. պատերազմիք կռուիք՝ և ո՛չ ունիք (յակ. Դ. 1)։

Ո՛հա պատուղ զա՛մ ինչ իբրև զբանջար խոտոյ ուտողաց։ Յետ այսորիկ տեսցուք մեք զերկրորդ փաստս հանգանակողաց՝ տեառն շնորհիւ։

Երկրորդ նեցուկ ընդդիմակացն Պահոց։

Ա՛հա քո՛ւ ասաց՝ * Ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ՚ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ։ և թէ՝ * Ամենայն որ մտանէ ՚ի բերան, կորուսանի երթայ՝ և արտաքս ելանէ. իսկ որ ելանէ ՚ի բերանոյ՝ ՚ի սրտէ անտի գայ. և այն պղծէ զմարդն (Մատ. ԺԵ. 11 — 18)։

Ո՛ստ իմաստասիրաց բաժանուածն է մայր լուսաւորութեան, պարտ է և մեզ զայս կարծիս ընդդիմակացն բաժանմամբ բացայայտել։

Ա՛տանել ՚ի բերան մարդոյ կերլեացն՝ զերիս ունի եղանակս։ Ա՛ռաջինն՝ զի՛նչ և իցեն տեսակք կերլեաց, ուստեայց իցեն՝ թէ պահոց. ՚ընդ իցեն, թէ անսուրբք՝ ըստ սխորժակաց ուտողին. ՚ընտասակարք են, թէ օգտակարք՝ ըստ ներընդունակութեան քնացն առն։

Եւ երկրորդն՝ կերլին՝ ի մէջ մաքուր անօթոց եփեալք
կամ եղեալք լցեն՝ թէ անմաքուր. պատուաւորը՝ թէ
անպատիւ, այսինքն՝ ի մէջ կլայկուն կաթսայից եփե-
ցեալք են, թէ սևացելոց. կամ՝ ի մէջ մաքուր ապակե-
ղէն ափսէից ածեցեալք, թէ կոշտ փայտեայ կամ
հողապանգուաձոց։

Եւ երրորդ՝ ուստողաց ձեռքն լուացեալք են, թէ
անլուայք. որպէս Օսմանցիք և Պարսիկք յառաջ քան
զկերակուրն լուանան զձեռս, և ապա ուտեն զինչ և
լցեն պատրաստեալ կերլիքն. իսկ Եւրոպացիք ո՛չ ու-
նին զայն սովորութիւն լուանալ զձեռս՝ ի ժամ կե-
րակրոց. պատճառն՝ որ բերօն պատուաքաղով ուտեն,
և ո՛չ զձեռան շաղախեն՝ ի կերլիսն։

Հարկ է գիտել, թէ այս երից տեսակաց ոչն է ընդ
դիմակաց Ճանաչեցեալն՝ ի մեկնութի՛ն քանի տեառն,
թէ * Ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ։
Եթէ վասն առաջնոյն գիտեն, և այնպէս ուսուցա-
նեն զմարդիկ, մեծապէս սխալին, և ընդդէմ գո՛ի
մեկնութեանն և մտաց ուսուցանեն։

Ո՛չ առարկայն այնմ պահու յայտնապէս ցուցա-
նէ որ փարիսեցիք և դպիրքն առարկեցին քո՛ի, և նա
ելոյծ զտարակուսութիւն նոցա այսուիկ ձեռնարկու-
թեամբ, և զեզրակացութի՛ն՝ աշակերտաց իւրոց մեկ-
նեաց ապացուցութեամբ։ Վասն զի գրէ այսպէս.
* Յայնժամ մատեան առ Յ՚ որ Յերուսաղէմ փա-
րիսեցիքն և դպիրք՝ և ասեն. ընդէ՞ր աշակերտքն քո
անցանեն զաւանդութեամբ ծերոցն, զի ո՛չ լուանան
զձեռս յորժամ հաց ուտեն (Մատ. ԺԵ. 1)։

Վասիկ գլուխ առարկութեանց է վասն անլուայ
ձեռօք աշակերտացն քո՛ի՝ ընդդէմ աւանդութեանց
ծերոց՝ զհաց ուտելն. և ո՛չ ընդդէմ Մովսիսական
օրինադրութեանց՝ զանուրբ և զարգելեալ կերլիսն՝
ըստ հեթանոսաց՝ ուտելն Առաքելոց, որք յայնժամ
ո՛չ կարէին վստահութեամբ գործել զայնպիսի հա-

մարձակութիւն՝ ընդդէմ կամաց վարդապետի իւրեանց, որ միշտ յարգէր զօրէնսն Մովսէսի, որպէս ուրեմն Թօրեայ Թլփատութեամբն, և քառանօրեայ գալստեամբն զօրինացն կատարեաց զարդարութիւն. զբժըշկեցեալ ըստ առաքեաց ըստ առաջադրութեանն Մովսէսի՝ առ քահանայսն. սատերաւ ձկանն վճարեաց ըստ չորեքդրամեանն. և ասաց * Ո՛չ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս, այլ լնուլ։ Այսպա աշակերտքն ոչ կարէին զանտուրքան ուտել ընդդէմ օրինացն Մովսէսի։ Աւրեմն ոչ էր հարցուածն հրէից վասն խաւնակ և անտուրք կերակրոց, և ոչ պատասխանին Քրիստոսի, յորմէ զօրութիւն առնել կարասցեն Թղլատրելիք ըստ յօժարութենէն յողոդող կամաց իւրեանց, թէ * Ամենայն որ մտանէ ի բերան՝ ոչ պղծէ զմարդ։

Պանդխտի պատասխանեաւն Քրիստոս՝ որք գայթակղեցան վարխեցլէն, աշակերտքն ազգ արարին տեառն իւրեանց, և նա պատասխանի ետ նոցա և ասէ՝ * Ամենայն տունկ, զոր ոչ տնկեաց Հայրն իմ երկնաւոր՝ խլեսցի։ Ո՛վ ամենեքեան Թէպէտ միով Արարչի են արարածք, բայց ոչ ամենեքեան են տնկեալք ի Հօրէ, այսինքն ընտրեալք ի սկզբանէ, որպէս ընդ ցորենոյն բազումք են յարդք. զցորեանն ժողովեն ի շտեմարանս, և զյարդն այրեն անշէջ հրով (Նախ. Ճ. 12). զարդարան և զօրինապահն ամբարեն յարքայութեան, զվնասուն և զօրինաքանդն մատնեն ի դժոխս։

Ի նոյն ատենի կոյր կուչէ ընտա՝ արտաքոյ նը գրոց ըստ անհաւատից Ճառատող մեկնաբանին. և պատուիրէ աշակերտացն մեկնիլ ի նոցանէ յատելն՝ * Թո՛ղ տուք զնոսա. կոյրք են՝ կուրաց առաջնորդք. (և մեկնաբանէ աստուածամարդ. բանիւ իւրով). կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկոքին ի խորխորատ անկանին (Նախ. ԺԵ. 14)։ Այս վճիռ անդառնալի, որ ըստ հաճոյս մեկնողք զաստուածային բանին, և աշակերտեալ հետևողք նոցին ի միասին ունին ըզ-

տեղիս յանելանելի կայանս։

Ի՛ուրեցուք ուրեմն երկիւղածութեամբ զպարտ և զյատակ մեկնութիւն բանին Թէ՝ * Ո՛չ որ ինչ մտանէ ընդբերան, պղծէ զմարդ։ Վասնզի առ այս և պարտաւորեան առաքելոց գնտրոս ևս խնդրամուտ եղեալ, կասկածեալ մի գուցէ զընդդէմն Մովսիսական օրինաց, ընդարձակաբար զայմ արտելեցեալն ուսեալ Տրամայեաց աէրն։ Ա՛ն որոյ խնդրիւ գնտրոս այսպէս * Մեկնեա՛ մեզ զառակս զայս։ Ա՛ւ զկնի ընկալնուն յանդիմանութիւնք յասելն առեառն՝ * Տակաւին և դուք անմիտք էք, և ո՛չ իմանայք, Թէ ամ որ մտանէ ի բերան, յորովայն երթայ և արտաքս ելանէ. իսկ որ ելանէ ի բերանոյ՝ ի սրտէ գայ, և այն պղծէ զմարդն։

Ա՛յս ևս ո՛չ կամելով առեառն երկբայելիս ինչ առ աշակերտան՝ ըստ որում ի նմին բերանոյ ելանեն անէծք և օրհնութիւնք, պարզաբանեաց զպղծ-ապրծ արտելութիւնն՝ այսպէս * Զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք, սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք. այս ամէն՝ որ պղծէ զմարդ։ Ա՛յս զառաջինն բանն իւր գլխաւորեալ եզրափակէ հանդերձ վերոյ գրեցուցմամբքն, Թէ * Ա՛յլ անլուայ ձեռօք ուտել՝ ո՛չ պղծէ զմարդ։

Ա՛ւանիկ արդեօք զայլ ևս տարակուսութիւն ի վերայս տէրունեան բանի և իւր մեկնութեանն. ուր ո՛չ ասաց՝ Ա՛յլ անխտիր ուտել զկերլիս՝ ո՛չ պղծէ զմարդ։

Ա՛յս զինչ. ասաց և հաստատեաց, Թէ անլուայ ձեռօք ուտել՝ ո՛չ պղծէ զմարդ։ Վասնզի և առաքեալքն վարխսեցւոց և դպրաց ո՛չ էին վանարգելեալ կերակրոց, այլ միայն ըստ աւանդութեանն ծերոց քահանայիցն լուանալոյ զձեռս, և ապա ուտելոյ. որոյ զինակ մեկնութիւն քաջայայտեաց աէրն, և ո՛չ եթէ զօրէնսն Մովսէսի։

Ա՛ւ վ՛ս այն կոչեաց զնոսա կոյր. զի Թողեալ զծանր ծանր պատուիրանան Աստուծոյ Մովսէսիս աւան-

դեալն՝ անգործածելիս, և զաւանդութեամբ ծերոց
պրպտել՝ վերժխանդիրը լինին մարդկանց։ Արդ ե-
րևի, թէ վարխեցիք և դպիրք զծերան իւրեանց առա-
ել պատուէին քան զԱստուած և զմարգարէս նորա
զՄովսէս. ոչ և՛ նեղկայիս թագաւորքն որկորաժէտք
զաղանդատէտ զորովայնատաշտան մեծատէս յարգեն,
և քանից նոցա՛ իսրաէլ շահագիտին՝ քան Աստուծոյ, և
Առաքելոցն պատուիրանաց և իրատուցն. և մանաւան-
դականն այն՝ զի կամին աշակերտացուցանել և զօրի-
նադիրան պահոց՝ աղանդատէտացն իւրեանց, թիւր և
ըստ չէին մեկնութեամբ քանից տէրունեան։

Արթուն ըստ նոցա քանն տէրունի հայէր յանխափր
՛ի կերլիան, որք ոչ պղծէին զուտօղան, ասացեն արդ
ւս Աստուծոյ՝ առաքեալն Պետրոս կամարար և հնա-
զանդէր քան Աստուծոյ մերոյ, թէ կամակոր և ան-
հնազանդ նմա։ Արթուն կամարար և հնազանդ, ասա
ըստ խորհրդոց որկորաժէտից ըստաւ թէ՝ ոչ որ ինչ
մտանէ ՛ի բերան, պղծէ զմարդ. այսինքն թէ կերա-
կուր ոչ պղծէ զմարդ ըստ չեզ։ Արդ նոյն առաքեալն
Պետրոս զնարդ մեռանգամ ընդդիմախօս գտանեցաւ
բարերար ան իւրոյ՝ ընդդէմ կանոնի հնազանդութե։

Ա՛րդ հաճութիւն էր Հոգւոյն սրբոյ զհրեայն և
զհեթանոսն միացուցանել ՛ի մի եկեղեցի քան՝ առնե-
լով ի հօտ և ի հովիւ, առելեամբ անօթոյն կտաւոյ
և՛ նմա խառն կենդանեաց ՛ի քաղցեալ ժամուն պետ
րոսի՝ ընդդիմացեալ հրամայողին, թէ * Ելի պետրէ,
պղէն և կեր. (Նա պատասխանէ) Քա՛ւ լեցի տէր, զի ոչ
երբեք կերայ խառնակ ինչ և անսուրբ (գործ. Ժ.
13. 14)։

Ոչ ապաքէն այս խորութիւն պետրոսի կրկնեալ
ընդդիմութիւն երևի առ տէրն, թէ յառաջագոյն վասն
կերակրոյ խեղամեցուցեալ էր զնա՝ ոչ որ ինչ մտանէ
ընդ բերան, պղծէ զմարդ, զի իւր հարցմանն առաւ
այն մեկնութիւն, և այժմ մոռացմամբ այնմ մեկնու-

թեան, ընդ իմացեալ առ՝ * գրաւ լեզի առ, զի ոչ երբեք էր ի բերան նորա խաւսակ ինչ և անուրբ։

Վասն որոյ իսկապէս, թէ ոչ ոք կարէ զերկրորդն գալ ի պետուս կամակոր և անհնազանդս առնել տեառն իւրում, երբ ինքն առ առաքին՝ ընդ քեզ պատրաստեմ՝ ի բանտ և ի մահ երթալ. և յատենի քահանայապետին առնէ՝ * հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան (գործ. ե. 29)։ Եւ պաշտօնակիցն իւր պօղոս զնոյն վերստաբերէ յանձն իւր ի գրելն. * Արդ՝ մարդկան հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ. կամ խնդրեմ մարդկան հաճոյ լինել, ապա քրիստոսի ծառայ ոչ էի (գաղտ. ա. 10)։

Եւ ըստ աշխարհի, ոչ կարէ գերման և գերուածոյ մահկանացու կայսերաց և թագաւորաց քննել՝ եթէ հպատակք իցեն, և՝ իւրաց մերժել. քայց եթէ հաւատարիմ կուսակալք գմնայլ և զտարակուսական բանան՝ ի հրովարտակին խոնարհութեամբ հարցանեն. եթէ մարդկանց այսպէս. ապա ու Աստուած ոչնչակ ևս առաւել հարկաւորի հնազանդութիւն և յարգ, մանաւանդ գիտողացն զկամս նոր սրբատան Առաքելոցն։

Ուրեմն և ոչ յատակնուաճն էր վն կերակրոց՝ քանն ասրուն՝ զոր կուսակալ հոգևրատեաւ խորհրդոցն իւր պետուս՝ հարցեալ ծանօթացաւ միայն անլուայ ձեռօք ուտողացն ոչ պղծիլ։ Եւ ոչ աստ ընդարձակեաց նոյն առաքելոյն պետուս ուսել զինչ և իցեն յանօթին այն. զի առ՝ * Ամէն երկիցս, և վերացաւ անօթն յերկինս (գործ. Ժ. 16)։

Այսպս ու ինչ այն ասել, ինքն Առաքեալն մեկնէ ի սան կուռնելեայ, ի քարոզելն զԱստուածութիւնն Քրի, և զկամին զիրկութիւն հեթանոսաց, յաւելն անդ՝ ,, Այս ինքնին գիտէք՝ որպէս անմարթ է առն ,, հրէի հպիլ կամ մերձենալ առ այլազգի. և ինձ ած ,, եցոյց՝ մի՛ զոք խաւսակ կամ անուրբ ասել ի մարդ- ,, կանէ։ Այսոյ այսորիկ և առանց ընդ քանս ինչ

,, աՏելոյ էկի կոչելեաւ . . . և միոչդեւս խօսէլ պետ-
,, րոս զբանս զայս , հանգեաւ Հոգին սուրբ ի վերոյ
,, ամենեցուն՝ որ լսէին զբանն : Ո՞ տրմացան՝ որք ի
,, Թլփատութենէն անոլ հաւատացեալք եկեալ էին
,, ընդ պետրոսի . . . յայնժամ պատասխանի ետ պետ-
,, րոս և ասէ . ա՞ի թէ զջուրն ոք արգելուլ կարէ առ-
,, ի չմկրտելոյ զսոսա , որք և զՀոգին սուրբ ընկալան
,, որպէս և մեք (գործ . Ժ . 28—47) :

Ո՞հմ վախճան տեսլեանս ի սոյն , ի միրհուէն Հե-
թանոսացս կոչս զբոսին , և ոչ յայտուրդ քաղցոյն
պետրոսի . զի անօթն վերացաւ . և պետրոս ի Յոպէ
գնաց տեսլեանն , պատրաստակ կերակրովք Սիմոնի
խաղախորդի՝ յայգեցաւ , և գնաց ընդ Հրաւիրեալսն
Կոռնէլեոսի . իսկ եթէ եկեր ընդ նոսա ոմն ինչ , թէ
և ոչ է գրեալ այն ի նոսա գիրս . բայց գնաց միայն
նոցա , կարեւոր է տեղի Հաստութեան մեզ խոստա-
ւաց տալ . զի եղեն մի երկոքեան հրէայն և հեթանո-
սն . և տրտչեցին զպետրոս լինել ոմն վախճանն ||
Ե՞ւս լեցին վասն տէրունեան բանին տացելոյ
ցոլոց . զի և ինքեանք են յաւուրսն Հարցո-
ղացն , որք ի ստանդուԹեան ձերոց կամէին վեր-
նադիր Առաքելոցն . որք տեսանէին զնոսա անտաց
ձեռօք ուսոլց , և զուարճ լինէր Մովսեսական օրինաց՝ նոր

անխախտ յաւէտ կերակուր ըստ հեթանոսաց · զի յիջ-
ուրեք երեւէր տեսին զԱստուածն Քրիստոս , այնուհետ վա-
րեցեալ · զորոց կարողանային փարխուեցիք և դադրիլ
ամբաստանել ։

Ասէ՝ մատիցուք առ երկրորդ յեղնարանն ընդդիմա-
կաց , որք առաւել զօրեղագոյնս կարծեն , և՛ ի նոցունս
պնդեալ կան իբր յանառիկ ամրոցի ։

Երկրորդ ընդդիմակացն Պահոց ։

Երկրորդ՝ ասեն ընդդիմակքն Պահոց , Թէ առա-
քեալն Պօղոս ասէ՝ * Աղերսելիս առաջի ամենայնի
կերակրոյ և ըմպելի ։ և Թէ՝ * Ամենայն ինչ սուրբ է
այնմ՝ որ խղճին իւր ուտիցէ ։

Ասեմք զիտելի , որ խղճիցդ առարկայք ինչ իշ են և
կերակրական իրելիսն , զի երանեն արուեստ ուսոյ ու-
սեալ առանց խղճիցդ զինչ և իցեն , Այլ այս ևս հարկ
է մեզ բաժանմամբք պատասխանել , զի մի՛ շինելեա-
ցին պարզ գիտելիքն ամենեցուն , Այլ՝ ի հրամայե-
եալ առաքելոյն կերակրելեացն կամ ձեռնպահանձելոյ ոգւոյ
Հարց և Հայրապետաց ըստ ախորժակաց ուսոցին ,
զինչ և կամեցան ուսել , եթէ բնութիւնն հանձայ-
նեցաւ ուսելեացն , Եւ այլն յորդորեալ առաքելոյն
անխախտ զուսեաց վերակացութեան , պատճառելով զբանս
Առաքելոյն՝ ուսել և գոյնախղճութիւն լինել հանդ-
գոյին էղբարց խրոց ։

Ասեր՝ ի սկզբան ձեռնարկութիւն , առայժ՝ նպա-
տակ միշտ է այն , զի ցուցցուք ընդդիմակաց Պահոց ,
որք ասեն հանդարձակ՝ Թէ Աստուած և Առաքեալքն
ձշ են տանջանաւորեալ ուժք պահք , այդ վարդապե-
տաց են ծանրաբեռնութիւնք ի վերայ ժողովրդոց · և
ձշ եթէ ըստ հրեականին այժմ լուսաւորութիւն հաւա

ապա քրիստոնէութեանն. ոչ թէ նուաստին մերժեցաւ, և՛ի տուընջեան շրջիլն։

Զի օրէնքն Մովսէսեան էին տուեալ և օրինակ նորոյս. և այն՝ որ յայնժամ անուանէր սնուցիչ, զի ոչ էր սրբիչ և մաքրիչ՝ ունելն ՅԻսի զնոսա զանազան յայտնի. այժմ ասի ինչ մերկ սնուցիչ ամենատուրդ Երրորդութեանն. այլ խոստին և գուժին՝ ի նոյն յանուն ինքնին՝ լինին մի և նոյն քրիստոնէութեամբ և երկրպագութեամբ Հօրն և Հոգւոյն։ Եւ ոչ թէ ի մեզ ինչ մերկ սնուցիչ, այլ և մաքրիչ է, և թէ՝ * Անձնացն ինչ ազէ. այլ զար այնմ մարդ է, որ խոստին ասացեալ (գործ. ԺԲ. 16—20)։

Հայր է՛ի Թլփոյ Առաքելոյն, որ ոտն Հոռմայեցւոյն յայտ ծանուցանէ՛ի հեթանոսաց դարձեալ նոր քրիստոնեացն զրկր զայն ներոլորական երամ՝ վասն շատութեան ծանուցեալ։ Զի թէ ըստ բնութեան քրիստոնեութեան ծանուցեալն ի հեթանոսաց՝ երկրորդ բնութեան դառնայ կրկնեցեալն նոքա. ապա Հոգւովն ամենեքին՛ ի նոյնս ծնեալ և զարդարեալ առանց ստոյգ ստուգութեան օրինակ և մարգարէութեան ասելոյ՝ գիշատիւ և Հաստատուն ուղղութեամբ հիմնատրեալ բնութիւք եղեալ են ուղղութեանն նախնեաց իւրեանց։

Հրեայք յԱբրահամ ցարդ օրինօք ծանրաբեռնեալ՝ ոչ հեթանոսիք՝ զեռանին ասելով՛ի Քրիստոս՝ մեռանին ի գիւ. և մեռանին՝ ցայսօր ստուգ զերբանեան օրինաց միայն բնակութեամբ զարդարեալք։ Եւ ստուգութեան Պօղոս առնուն վիճակեալ բարեխոս զգեստեցեալ Քրիստոսաւ ինքնին պատմէ, ,,Զանազ ոչ ամաչեմ ի խոստ-


,, նայեն, և ամենեցուն զանձն ի ծառայութիւն կացու-
,, ցի, զի զբաղումն շահեցայց. Եղե ընդ Հրեայն
,, իբրև պհրէայ, զի պհրէայն շահեցայց. եղե ընդ
,, օրինօք, իբրև զայնոսիկ՝ որ ընդ օրինօքն էին. իբրև
,, ոչ եթէ ընդ օրինօքն էի, այլ զի որ ընդ օրինօքն
,, էին՝ և զնոսա շահեցայց. ընդ անօրէնսն եղե իբրև
,, զանօրէնս. իբր ոչ եթէ անօրէն ինչ եի Աստուծոյ,
,, այլ ընդ օրինօքն Քրիստոսի զի շահեցայց զանօրէնս.
,, ընդ ամենայնի ամ եղե, զի զերիս ապրեցուցից զո-
,, մանս. (Այլ ամ ասեմ վասն ասելոյն, զի
,, կցորդ եղից նմա (ա. Կոր. Թ. 19—23).

Այլ՝ այս այլ վասեալ ամօթին նախանձեաւն, որ
ասց՝ Ի յաստուածեական շնորհէն՝ լինէր և մարգարէակա-
նին հոգւով. և զիսէր՝ Թէ ասելոյն Քրիստոսի ասել
զերծանել ի վերոյ լերանց՝ այսինքն կոչելոյ, և
զերոյ՝ Թագաւորաց. որում հրամայեցեալ էր * Ն՛Լ
՝ի վեր լերինդ զերծանել՝ ասելոյն Սիոնի (առանց
մարմնաւոր վինոյ և վինասրոց. զի որ զսուր առցէ,
սրով անկանիցի) , զերծելոցն զօրութեամբ զբաղելո-
ցո՝ ասելոյսն Երուսաղէմ. զերծելոցուցէք, ա՛յ
երկնչէք (Եսայ. խ. 9).

Ահեղ ոչ վինա. ասա վինչև, կամ սրով մարդ
ընդ կայսերս և ընդ Թագաւորս հեթանոսաց եղեալ,
նուաստեալ գերեցից վինա ի հնազանդութիւն վասն
և ասելոյսն Նորա.

Պատասխանին, սիրով և խոնարհութիւ. վասն որոյ
ասէն՝ * Ա՛Լ գրեմ և ոչինչ ծանրացայ ձեզ. այլ
բանիւ խոտորեալ էի, խեղեալ կայայ զձեզ (Բ. Կոր.
ԺԲ. 16).

Ո՞ երթա, և սրտիով խեղեալ կայայ երանելի և առա-
քեալն Պօղոս. ասելովն՝ յայտնեա ձեզ այս աշակերտե-
ալոցս քոց ծառայից. զի և ձեր Թերևս վինչն շահիլ
կայեալ մի՛ անհամարձակ ի խոտորելն բանին կենաց,



Լուարուք սակ , զինչ առ Հռովմայեցիան՝ նորոգ
Հաւատացելոց վասն՝ գրեմ , անդ եղելոց աշակերտե-
լոցն գՔրի , և մեր : ,, Յ. յԼ զակարացեալն ՚ի հաւատս՝
,, ընկալարուք , մի՛ խղճիւ երկմտութեանց . ոմն հաւա-
,, տայ ուտել զամ. և որ հիւանդ է՝ բանջար կերիցէ :
,, Ալր ուտէն , զայն որ ոչն ուտէ , մի՛ անգոանեսցէ . և
,, որ ոչն ուտէ , զայն որ ուտէն , մի՛ դատեսցէ . . . :
,, Աստ ոչ ես որ դատիս զայլոյ ծառայ . իւրում տն
,, կայ կամ անկանի . բայց կացցէ , զի կարօղ է տէրն
,, հաստատել զնա : Ոմն պահէ օր ըստ օրէ , և ոմն պա-
,, հէ զօրհանապազ . իւրաքանչիւր ոք զիւր միտս հա-
,, ճեսցի : Ալր խորհի զօրն , տեառն խորհի . և որ ոչն
,, խորհի զօրն , տեառն չխորհի . և որ ուտէ , տեառն
,, ուտէ , և գոհանայ զԱստուծոյ . և որ ոչն ուտէ , տն
,, ըուտէ , և գոհանայ զԱստուծոյ . զի ոչ ոք ՚ի մէնջ ան
,, ձամբ կեայ , և ոչ անձամբ մեռանի (հռոմ . ժդ . 1—7) :

Յուշ ՚ի կուրծ առնելոյ խղճի մտօք նախ՝ մանրախոյզ ծայքմամբ , զվերոյգրեալ զհայրանամ խրատս սրբազան Առաքելոյս տեսեալ ՚ի միտ առցուք . և ապա ինացելոցն թևակոխեալ՝ ձառեսցուք ՚ի շինուածիւն եղբայց մերոց ՚ի քրիստոս :

Զառաջինն հրամայէ * զակարացեալն ՚ի հաւատս՝ ընկալարուք , մի՛ խղճիւ երկմտութեանց || . որով ցուցանէ զանհաստատ յողդողդութիւնս ոմանց նոր հաւատացելոց , որ ըստ հայրենի բնաւորութեանց ձեռնթափ լինիլ , և ձշմարտութեան քրիստոսականս օրինաց և կարգաց սրտեռանդն հետևիլ տկարանան , զայնպիսիսն ներողութեամբ ընկալարուք . և մի՛ երկմտութեամբ վարիլ ընդ այնպիսիսն , թէ ոչ ուղղապէս կան ՚ի հաւատս , զրոյս մեք նոցա քարոզեցաք . զի ամ մեծ՝ բայ ՚ի յԱստուծոյ՝ ՚ի փոքրոյն սկսանի , և փոքր ինչ խմոր զամենայն զանգուածն խմորէ :

Եւ զմասնաւնան տկարահաւատութեն բացայայտէ .

* Ոմն հաւատայ ուտել զամ . և որ հիւանդն է՝ բան-

ջար կերիցէ || : Սովաւ ցուցանէ զհեթանոսականութեանց սովորութիւնն, անխտիր զոհակերութեանց և խրախճանաց՝ նորոգ աշակերտելոց • և ըստ որում՝ ի հնացեալ սովորութեանց՝ իսկ և իսկ մեկնիլ այնոցիկ՝ ծանր տուգանս քնութեանց երևին, զանցառութիւն խրատուէ առ ժամանակի • և որ ասէ՝ ոմն հաւատայ ուտել զամ • յայտ է թէ ըստ այսմ ժամանակի՝ անխըտիրք եղողացն, ասելոյ ամ ինչ վան մարդոյ արարան յԱստուծոյ, և իբր զբանջար խոտոյ ուտեմք, թէ անաւրէնք էցեն, և թէ զոհեալք:

Նմին իրի զհիւանդան այնպիսեօք • այսինքն՝ որք զայնպիսի գիշակերս տեսանելով գայթակղեսցին, կամ ի ժողովս նոցա գտանեցեալ օրինապահքն • որոց ոչ նեղեն խիղճք սեղանակցիլ և ի կերակրոց նոցին հաղորդիլ ընդ նոսա • նոքա ասէ, բանջար կերիցեն առանձին • զի թէ ուտեմք ասէ, ոչ առաւելումք • և թէ չուտեմք՝ ոչ նուազիմք:

Առաւել հետևեցուցանէ * Որ ուտէն, զայն որ ոչն ուտէ, մի՛ անգոհանեսցէ • և որ ոչն ուտէ, զայն որ ուտէն, մի՛ դատեսցի || • այսինքն՝ ի հեթանոսաց հաւատացեալն՝ որ ուտէ համարձակ ընդ • զհրէից հաւատացեալն՝ որք ոչ ուտեն ըստ ինքեանց ընդարձակ զնմ ինչ, մի՛ հեգնական բանիւ զկծեցուցեալ անգոհանեցէ • նոյնպէս և՝ ի հրէից հաւատացեալք ապաստանութեամբ օրինապահութեան իւրեանց՝ որք ոչ ըստ հեթանոսացն ուտեն, զնոսա մի՛ դատեսցեն • զի տակաւին անկիրթք են օրինաց:

Նա այսու՝ ամենայնի, իբրև զմանկանս քրիստոնէական օրինաց՝ զկաթն ջամբէ • և որպէս զմայրն՝ զհրէայն և զհեթանոսն դիեցուցանէ և անուցանէ զաժենեաեան յորդիս Աստուծոյ • զի հետ զհետէ լինիցին ուղղակրօնութեամբք անխարդախ կաթին փափագօքք, զի նուաւս աճիցեն ի փրկութիւն (Ա • պետ • Բ • 2):

Հետ այսոցիկ ծնողական խրատուց երկարանչիւր

կողմանց • և որպէ զդաստիարակ սատան զանզուսպան , յասել՝ անդ՝ * Դու ոչ ես՝ որ դատիս զայլոյ ծառայ • իւրում՝ տէն կայ կամ անկանի ‖ : Սուքաւ թէպէտ դադարեցուցանէ զխստութիւն և զբանակռուութիւն յերկուց կողմանց , որոց ոչ պատկանի յայսպիսեան դատաւոր լինիլ , այսինքն հրէայն՝ հեթանոսին , և հեթանոսն՝ հրէին : Բայց զյանցաւորն ոչ խոպատ անպարտ և անձնիշխան ազատ Թողու՝ ի կամս իւր յասելն իւրում՝ տեառն կայ կամ անկանի ‖ • որով կամի ասել՝ թէ և յանցաւոր իցէ անխտիր ուսուցչն զնա , կայ ոչ՝ որ դատէ զնա , կամ տն իւրոյ անկ է խրատել զայնպիսին :

Որպէս և՝ի մեզ այժմ տուրբ եկեղեցին մայր ամ հաւատացելոց անուցանէ Պատիկս յամատղաց զհաւատացեալն Աստուածական քարոզութեամբ և նիկիական դաւանութեամբ • իսկ զյանցաւորսն օրինաց՝ անհատ եզակի անձինս Թողու յատկացեալ ազգաց եկեղեցական գլխոց , Եպիսկոպոսաց և Առաջնորդաց , որք տեարք այնմ գրոհի ըստ հոգևոր մասին անուանին , նոքա օրէն զայնպիսի հեղգացեալսն խրատել և ուղղել • և ըստ տէրունեան հրամանին՝ սասալլիր եկեղեցւոյն : Որով պարզապէս տեսանի • զի Թէպէտ անխտիր վստահացեալքն յուսել զնա՝ յանցաւորք են , բայց համապատիւք և համակրօնք ոչ են միմեանց դատաւորք՝ ի քննել և՝ի դատապարտել • զի իւրում տն կայ Առաջնորդին կամ Եպիսկոպոսին անկանի խրատել և ուղղել զայնոսիկ ըստ իւրեանց սովորութեանց : Ա՝ որոյ յայտնապէս ասէ՝ * Բայց կացցէ • զի կարօղ է տէրն հաստատել զնա ‖ :

Ա.յլ ինչ գացագոյն քան զԱստուածականս այս գան • նախապէս խափանեաց զբանակռուութիւն ազգընդ՝ազգի , և եղբայր ընդ եղբօր , ասելով իւրում տն կայ՝ կամ անկանի՝ի դատել • և ապա զանուղղայ վարս այնպիսեաց յատեան դատաստանի եկեղեցւոյ գլխաւորին յանձնելով ըստ տեառն իւրոյ խրատուն ասէ ,

եայց կացցէ ՚ի քրիստոսական դաւանութենէ , մի՛ յոյժ
սահատեցուսցէ ոք զինա վասն օրինազանցութեանն . զի
կարօղ է տէր Եպիսկոպոսն կամ Առաջնորդն և կամ
Խոստովանահայրն խրատուվք և ապաշխարութեբք հաս-
տատել զինա : ՚Ո՛վ և ջա զայն ասաց առ հայր * Ջամ
զոր ետ ցինա հայր՝ ուչ կորուսից ՚ի նմանէ . (յովհ . ժ .
39) : Ար է խրատ գլխաւորաց եկեղեցւոյ , այնուհե-
հակել ՚ի վերայ հօտին քրիստոսի :

Ուրեմն ուչ ոք իսպառ կայ ազատ ՚ի կամ իւր ա-
պաստան , պահել և ուչ պահել . որովհետև կայ ամենե-
ցուն տէր ՚ի հակել , ՚ի խրատել , ՚ի դատել և ՚ի հաստա-
տել : Ժասարակութեան այս է հրաման՝ եղբայրսի-
րութեան զհետ երթալ , և ուչ դատաւոր այլոց լինիլ :
՚Ո՛վ ասէ՝ * Ոմն պահէ օր ըստ օրէ , և ոմն պահէ զօր-
հանապազ . իւրաքանչիւր ոք զիւր միտս հաճեսցի ||:

Ա.յլ ինչ առաւել քան զայս հաստատագոյն վկայ՝
թէ առաքելադիւք են պահքն , երբ ահա կան յաւուրս
Առաքելոցն պահօղք զօրհանապազ , և օր ըստ օրէ :
Որպէս և այժմ յանապատան ճգնակիր միանձունք
պահեն զօրհանապազ զուլջոյն շրջան տարւոյն , և ՚ի
շէնան ըստ սահմանեալ կարգաց՝ օր ըստ օրէ , այսինքն
զաւուրս ոմանս ուտեօք , և զոմանս՝ պահօք :

Ուրեմն ճշմարիտ Առաքելադիր են պահքն : Ա.յց
պահողաց և ուչ պահողաց դատաւորք և տեարք կան .
մեք ջանասցուք զգերանս անհետ առնել յաչաց մե-
րոց , այսինքն զմեծամեծ յանցանս , որք ՚ի մարդկանց
անտեսանելիք և ՅԱՅ մեծ գրեցեալք են : Ա.նզի
խրատէ հայր մեր . * Որ խորհի զօրն , տեսանն խորհի .
և որ չխորհի զօրն , տեսանն չխորհի :

Ծուի թէ՝ այս է միտք Առաքելոյն . որ խորհի զար-
ժանապատուութիւն աւուրն , յորս վասն փրկութե
ներգործական և ներելի մեղաց մերոց վճռեցան պա-
հել , և պահեմք զաւուրան զայնոսիկ , տեսանն մերոց
մատուցանելիք ընդունդութեան մերոց զծառայու-

թիւն. որով խորհիմք ըստ աւանդութեան եկեղեցւոյ՝ պահքն յայն աւուրան մեզ փրկութեան և թողութիւն են ենթակայ, զորս ապերախտիք Աստուծոյ՝ և յուսով ապաւէնք առնուլ զայն, զոր առաց աչքն մեր. * Ոլոց աւետալ է՝ ի հօրէ իմմէ||.

Նա որ ոչն խորհի զայսպիսիս, աւետան զարիաւուրն չխորհի. ինքն առցէ վասն անձին իւրոյ զպատասխանի. * Նա որ ուտէ, աւետան ուտէ, և գոհանայ ՚ի Աստուծոյ. և որ ոչն ուտէ, նոյն ուտէ, և գոհանայ ՚ի Աստուծոյ||.

Յայտ է թէ՝ զձրի պարգեւն Աստուծոյ վայելօղք, յաղագս զանազան աւեսակ գոյացեալ բարութեց ՚ի վայելս մարդկան, բռնադատեալ ՚ի խղճէ՝ գոհանան յայնց բարութեանց առաջի աւետան: Նակ ոմք վասն ճգնութեան կամ օրինապահութեան զսպեն զկամս մարմնոյն, և ընդարձակ ոչ մխին յայնս տակս ակընկալութեան իւրեանց. ևս գոհանան ՚ի Աստուծոյ, որ կատարեալ է զնոսա ընդ դէմ բնութեան տկար և համեստ: Ո՞վ ի ոչ ոք ՚ի մէնջ անձամբ կեայ, և ոչ անձամբ մեռանի: Ա.յս հայի յայն բանն Քրի՝ որ ասէ, * Առանց հօր իմոյ ոչ կարէ ոք առնել ինչ||: Ո՞վ նա գիտէ զամ և հաստացանէ ամենեցուն ըստ գործոց և կարեաց, որպէս ՚ի վերոյ ասաց՝ իւրաքանչիւր առանձին կայ կամ անկանի:

Ա.հա մինչև ցատա սրբոյն Առաքելոյն իբր տղայոց կանխն ջամբելով, զմիջնոյն կատարեալսն զկարասոյն Հաստարհն, առաւել զտկարացեալսն ՚ի հաւատս գգուելով և դաստիարակելով, և զօրինապահն քաղցրութեբ նուաճելով, զի մի՛ զփարիսեցւոյն կրեսցեն զսոյժ. վայ և ասաց՝ * Խրատանչիւր ոք զիւր միտս համձեսցի||.

Նակ սկսեալ ՚ի 13 համարէ այնմ գլխոյ, որպ Հարատար բժիշկ փոյթ տարեալ նրատակ զայնպիսի տկարացեալն, Թերևս կազդուրեսցին յօդուածք խղճից իւրեանց՝ անձնխրոցն կշռելով զկրկնակի կենաց զաւդջութեանցն զօգտակարութիւն և զչինութիւնս

գայթակղեալ եղբարցն ինքեամբ ։ Եւ ակամն այս-
պէս ,, Ա. յաւուրն մի՛ զմիմեանս դատեցուք ։ այլ
,, առաւել զայս դիր՛ ի մտի , չդնել գայթակղու-
,, թիւն եղբօրն ։ Ո՞չ այս գիտեմ և հաստատեալ եմ՛ի
,, Քն Յն , զի ոչ ինչ պիղծ նմանե ։ բայց այնմ՝ որ
,, համարիցի ոք ինչ պիղծ , նմա՛ և պիղծ ։ զի եթէ վն
,, կերակրոյ եղբայրն քո տրտմի , ոչ ևս սիրով գնա-
,, ցես ։ մի՛ կերակրովիւք քո զնա կորուսաներ , վասն որոյ
,, Քն մեռաւ ։ մի՛ հայհոյեսցի քումն ձեր ։ Ո՞չ ի՛ ոչ
,, է արքայութիւնն Աստուծոյ կերակուր և ըմպելի ,
,, այլ արդարութիւն և խաղաղութիւն , և ևանդութի՛
,, ի Հոգին սուրբ ։ ։ ։ մի՛ վասն կերակրոյ քակեր զգ
,, գործ Աստուծոյ ։ ամ ինչ սուրբ է ։ այլ չար այնմ
,, մարդոյ է , որ խղճիւն ուտիցէ ։ Լաւ է ոչ ուտել
,, միս , և ոչ ըմպել գինի ։ և ոչ որով եղբայրն քո գայ-
,, թակղի , կամ գթէ , կամ տկարանայ ։ Դու՝ ապրեցն
,, հաւատս ունիս , կա՛ր առանձինն առաջի Աստուծոյ ։
,, երանի՛ որ ոչ դատեցի զանձն , որով զբնկերն վտո-
,, ձիցէ ։ Նայց որ խղճէն , թէպէտ և ուտիցէ՝ դա-
,, տապարտեալ է ։ զի ոչ ըստ հաւատոց ։ զի ամ ինչ՝
,, որ ոչ՛ի հաւատոց է՝ մեղք են (հռոմ ։ ժդ ։ 13—23)։

Ա. լուծ՝ ահա սրբազան առաքեալն Պօղոս , և խրա-
տական բանք նորա , յորս յուսացեալք ընդդիմակացն
պահոց , և ասեն՝ Պօղոս առաքեալ զամ ինչ ուտել
հրամայէ , և պահք պահել ոչ աստ ։ զի աբքայութիւնն
Աստուծոյ ոչ է կերակուր և ըմպելի ևայլն ։ Իբր թէ
ըստ կամաց նոցա աստ առաքեալն , թէ պահք պահե-
լով և գինի չխմելով յարքայութիւն գնալ չի լինիր ,
այլ սուրբ առաքինութիւնք շատ կան ։ թէ զնոսա կա-
տարէ մարդ , և առանց պահք պահելոյ՝ կարէ գնալ
յարքայութիւն ։

Ահեղացեն կացցեն սրդ յատեան առաքելոյս Քն ,
այնու յուսով յուսացեալ եղբարքն մեր ։ և՛ի գատ
քննութեան բանից նորա մտեալ , կամ խեղամտեցու-

ցեն զմեզ սուգութեան մտաց Առաքելոյն, և կամ
ինքեանք: զարուք ծանօթացեալ ուղիղ զօրութիւ զա-
նից նորա, ի՛ զոր գայթակղեցուացեն անուղղայ մեկ-
նաբանութեամբ իւրեանց:

Ասանկ Առաքեալն՝ յետ ի վերոյ գրեցեալ խրա-
տոյն ի ափսուքիւ ի հեթանոսաց դարձելոցն յաճախ-
ութիւն ձշմարիտ, յաւելու ասէ: * Այսուհետև մի՛
զիմեանս դատեցուք. այլ առաւել զայս դիք ի մտի՝
ջանել գայթակղութիւն եղբօրն: Ինձ այսպէս թուի
պարզութիւն առաքելական հրամանի, թէ զոր ինչ
խրատք հարկաւորք էին ի հրէից և ի հեթանոսաց դար
ձելոց յԱստուած՝ հաւատով մուտ եղբայրացելոց ա-
մենեցուն, ասացի ի վերոյ լրատէս. այսուհետև մի՛
դատիք զմիմեանս վասն սուրբ և անսուրբ կերակրոյ.
զի ամ արարածք Աստուծոյ են ի վայելս մարդկան.
իւրաքանչիւր ոք զիւր միտս հաճեացի՝ զինչ ինչ ու-
տելն, և զնչ ուտելն. զի խաւար հեթանոսութենն զու-
հից էանց, և տիւ ճշդիւթեանն է ընդ ձեզ. եղ-
բարք էք դուք առնելեան, մի՛ դատիք զմիմեանս.
այլ առաւել զայս դիք ի մտի՝ չջանել գայթակղու-
թիւն եղբօրն:

Ա. Ոմանք ոչ եղբայր կոչին եղբօրն գայթակղի.
պարտ ոչ պահօղն ի պահօղէն գայթակղի, թէ պահօղն
ի չպահօղէն: Յայտնի լինի այս, որ չի պահօղն առաս
կամօք զամ ըստ հաճոյս իւր կատարէ առանց արգել
ծութեան կամաց, այսինքն յօրինադրոլացն պահոց,
և ի դասուորացն եկեղեցւոյ: Ոչ երեսցէն ինձ, ըստ
այնմ՝ անզգաստն ծիծաղելով գործէ զամ. ապա վասն
այլ պարտի այնպիսին գայթակղիլ յատեաս և յօրի-
նադաւ անզօր արանց, որք ոչ ունին վասն օրինակ ու-
ղիք գայթակղութեան:

Ա. Եւ իրատամբ ըստ մարդկային տկար դատողու-
թեանց, երբ օրինադաւն առնէ զերբայր ոք քրիս-
տոնեայ՝ իշխանաւոր՝ վարձաւ՝ և ուսեալ մտացի՝

քայց առ ծէտս հաւատոյն մերոյ՝ քանահրոյ խաւարային երկիւղածութենէ, անհարազատ պատկեալ ամուանոյն, և եպերելով զօրինադիրս պահոց, անխաւիր է՛ի կերակուրս և յըմպելիս և յայլ անվայել գործս, մանաւանդ յաւուրս պահոց. այսուհանդերձ խղճահար պահացօղք ըստ երկիւղածութեան իւրեանց գայթակղին սակաւ դատողութիւք իւրեանց՝ ի հզօրագունից, աստէղ կամ խորհելով, եթէ այն ոչ իշխան վարձաւ և իմաստուն զնա՞ աներկիւղ առնէ և գործէ ընդդէմ մեր կարծեցեալ բարեպաշտութենէ, և օր ըստ օրէ յաճոյեն կամք և գործք նորա, մեք որ ահիւ և դողութեամբ յաղօթս և՛ի պահս դեգերիմք, և հաւատս միմ յանկողինս մեր, նոյնպէս յաւուրս և՛ի վերայ այսոցիկ ամենայնի աղբերացեալք են անյաղողութիք մեր, հիւանդութեամբք, մահուամբք սիրելի զուգակցաց՝ որդւոց և եղբարց, և առաւելն աղքատութիք։ Վ՚այ թէւր մակաբերութեամբ ասեն, ուրեմն մեք մոլորեալ եմք, ոչք լսեմք զպատուիրանս օրինացդ, որովք տանջիմք չարաչար։

Վ՚ասն որոյ խրատեմ Ընտրեալն Աստուծոյ՝ չդնել գայթակղութիւն առաջի եղբարց, գիտելով զԲրանան տեառն իւրոյ՝ անօգտակար այնպիսեաց, որ ասէ, * Վա՛յ՝ որ գայթակղեցուցանէ զմի ի փոքրկանց յայսցանէ հաւատացելոց, եւայլն (Տաս. ԺԸ. 6)։ Զարմ ընդ նմին՝ * Ջայս գիտեմ և հաստատեալ եմ ի Քրիստոս Յիսուս, զի ոչինչ է պիղծ նմա՛ բայց այնմ՝ որ համարի ոչ ինչ պիղծ, նմա՛ է պիղծ։

Վ՚ասացեն ասա վասն Ընտուծոյ՝ յուսացեալքն առ Աստուածն զօրս, զի ոչինչ հրամայէ Աստուածն՝ պահք ի՞նչ պահել, թէ կերելեաց ըստ հրէից խորհուրդն ինչ ունի՞ զի ոչինչ է պիղծ նմա՛ ասէ. արդեօք վասն ընդեղինաց՝ ոսոխ, լսակայէ, սխեռն և գանջարեղինաց ոչ երբէք ի հնուումն, և՛ի նորոյս՝ երկեալ ինչ է վասն պղծութեան նոցա կամ սրբութեան, որ առաքեալն

երդմամբ հաստատել զանազգէ զերբուԹիւն նոցին. Թէ վասն զանազան կենդանեաց՝ Թռչնոց, ձկանց և ժժմանց են վէձք այլոցն, և լուծմունք տարակուսանաց նոցա, յԱռաքելոյն սահմանեալք։

Արդ հետևելով ճշմարտուԹենէ գանից՝ ասացեն, Թէ իսկապէս վասն զանազան կերակրոցն է գան Առաքելոյն. և ոչ վասն ընդհանուց և պահոց, գովելով զնաւատասիրուԹիւն նոցին, և ասելք՝ մեք ոչ երբէք պետ կամեցեալ եմք զոք յաւուրս ուտեաց՝ ըստ տանելոյ գնուԹեան ուտել զհաճոյան. զի ամ ինչ՝ Թէ և ըստ հնուԹեան անտուրբ ասացեալք, այժմ սրբին անուամբն Աստուծոյ. զի Թէ հեԹանոսն. նոյն անուամբ քրիստոնեայ լինի, որ կայ յաւիտեան յարքայուԹեանն երկնից ընդ Աստուծոյ, վասն որոյ ոչ պարտին սրբիլ կերակրոքն, զոր ոչ առաւել ինչ յրստամոքսի գան ըզգան և ջուրս ժամն միոյ աւուր։ Ուրեմն գանք մեր ընդ վասն պահոց ըստ եկեղեցական կանոնադրուԹեանց, և ոչ ախորժելն կերակրոց յաւուրս ուտեաց։

Արդ զոր ունի այնպէս յայտնի վկայուԹիւն ուսուի և ի տուրբ գրոց, որ հրամայի նովաւ պահք ոչ պահել քրիստոնեայ եղբարց, մանաւանդ առաջի ի քննել։ Այլ զինչ արասցուք որ ասէ Առաքեալն, *Զի եԹէ վասն կերակրոյ եղբայրն քո տրտմի, ոչ ևս սիրով գնացեր. մի՛ կերակրովիւն քո զնա կորուսաներ. վասն որոյ Քրիստոս մեռաւ։ Կարծ զոք առել, Թէ այս ոչ ևս յաւիտեան վասն պահոց. քանզի այժմ ի գործ հաւատացելոց մեծ մասն ի հեԹանոսաց մկրտեցեալքն են, այն խորուԹիւն յայնժամ ի մէջ տրէից և հեԹանոսացն էր. այժմ ի տրէից հաւատացեալք յոյժ սակաւք են ի մեզ, զնարդ պարտիմք ի խորհուրդ կերակրոց եղբօրն տրտմել յաւուրս ուտեաց։

Արդ ի մեր ազգիս ազգանակցուԹեան յուտեաց աւուրն ոմանք ուտեն զխոզենի՝ և ոմանք ոչ, երբեմն ոչ զոք տրտմի անդ սակս ուտողացն, քանզի այդպիսի

տրամին՝ երբ տեսանեն օրինապահք զեղբարան մեզ կրօնի և ազգի ընդ ինքեանս բազմեալ՝ ձաշակ յաւուրս պահոց, ուտեն յայն աւուր արգելեցեալ զկերլիսն. և ինքեանք իբր խորդացեալք՝ ինոցանէ՝ զպահոցն ուտեն, ըստ վերոյ գրեցելոյս՝ ոչ միայն տրամին, այլև գայթակղին: Ուրեմն սեղանակից միակրօն եղբայրն ոչ բարւոք գնաց ընդ ընկերին, վասն որոյ Քրիստոսն՝ ի սէր նորին մեռաւ. սակայն այն եղբայրն ոչ թէ մահուամբ իւր ոչ օգնեաց նմա, այլ որկրամոլութիւնն զնա յուսահատեցուցեալ մեռոյց՝ ի բարեկրօնութեանց նորին:

Ա՝ի հայհոյեսցին բարիք ձեր (ասէ), զի ոչ է արքայութիւնն Աստուծոյ կերակուր և ըմպելի: Ահա հայհոյին բարիքն, որ խրատէ՝ մի՛ հայհոյեսցին: Վասնզի գործ բնութեան է՝ յորժամ հկօրն յաղթահարէ ըզտակար ոք, յայնժամ յաղթահարեցեալն՝ ի դառնութէ կրից կամ սգալով ողբայ, և կամ անիծաբանութեամբ հայհոյէ:

Ի. յասէս երբ օրինապահն տեսանէ զփարթամ և զուսեալ կարող զոք ընդդէմ սովորութեան հայրենեաց ընդարձակեալ զկամս իւր, և օրինակ չար լեալ այլոց, ըստ մարդկային տկար դատողութեան իւրոյ զԱստուած պատճառ կարծելով համարձակութէ եղբօրն, ասէ՝ ի մտի իւրում՝ Աստուած է պատճառ օրինազանցութեան սորա, վասն էր շնորհեալ այսպիսի անխիղճ և անկրօն առնս այսմիկ զփարթամութէն և զինչնանութիւն, որ յուսով այնոցիկ համարձակեսցի օրինակոխ լինիլ. որով հայհոյէ բարին Ն՝ զոր վայելէրն նա: Ա՝ն որոյ ասէ՝ մի՛ հայհոյեսցի բարին ձեր՝ զորս շնորհեալ է ձեզ Աստուած, գայթակղութեամբ եղբօրն. զի արքայութիւնն Աստուծոյ ոչ է կերակուր և ըմպելի. այսինքն փափկակեցութիւնն և որկրաժէտութիւնն աստի կենաց՝ ըստ առաքի մեծատառն և աղքատին Ղազարու, ոչ է արքայութէ Աստուծոյ:

Եւ ասէ Աստուած զայս բան իւր առ Կորնթացիսն առաւել պարզաբար բացայայտէ՝ առանց այլոց ուրուք վերինութեան կարօտելոյ • * Այլ կերակուր ըզմեզ , (ասէ) առաջի այ ոչ կացուցանէ • ոչ եթէ չուտեմք , (ասէ դարձեալ) պակասեմք ինչ , և ոչ եթէ ուտեմք՝ առաւելումք ինչ • բայց զգո՛յշ լերուք՝ գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթակղութի՛ւն լեզի տկարաց (Ա • Կորն • 8 • 9) : Իսկ թէ զինչ է իշխանութիւնն այն՝ գրեցուք ՚ի հետեւեալ բանին :

Եթէ ոմըք յուրիշ Աստուածոյ ոչ է կերակուր համ ընդելի , ապա ինչ է հաճոյն Աստուածոյ՝ որ կոչէցի ոմըք յուրիշ • ասէ՝ * Այլ արդարութի՛ւն և խաղաղութիւն , և խնդութիւն ՚ի Հոգին սուրբ • զի որ այսմ ծառայէ քրիստոս , հաճոյ է Աստուծոյ , և ընտիր մարդիկ ‖ : Արդարութիւն և խաղաղութի՛ւն յայնժամ լինին ՚ի մեզ , յորժամ սիրեցուք զեղբայր կամ զընկեր՝ իբրև զանձինս մեր , և զհայրենասուրս աւանդութիւնն ընդ նոսա հաւասար պատուեցուք , և այլոց օրինակ բարի զանձինս մեր կացուցուք • որովք ուրախ առնեմք և զՀոգին սուրբ • եթէ այսպէս ծառայեմք ՚ի սիրելին քրիստոս , այսինքն աղքատաց և տկարացեալ եղբարց , լինիմք հաճոյ Աստուծոյ , և յարգեցեալ ՚ի մէջ հաւատացելոց եղբարց :

Արի՛ վասն կերակրոյ քակեր զգործ Աստուծոյ ‖ : Հա՛ դարձեալ վերակրկնէ , թէ որո՛վք գայթակղին մարդիկ • զի ոչ ոք տեսանելով զընկերն առաւել քան զինքն հարուստ՝ վարձո՛ւ իշխանաւոր՝ խոհեմ և իմաստուն , զառնապատի ՚ի ջնութենէ իւրմէ գայթակղել • այլ երբ զայնպիսի կարող անձն եթէ տեսցէ ընդդէմ հայրենի սովորութեանց օրինապանց՝ յուսահատեալ գայթակղի • այն է՝ որով քակի գործն Աստուծոյ • զի գործ նորա էր զամենեսեան առնել ՚ի մի • բայց հանարձակ ուտելն յարգելեալ աւուրս կարողացն անձին , քակէ զիմաքանութիւն եղբայրակրու-

թեան . և գրկն աստուծոյ ինոյ անկաւատ :

Ա՛մենայն ինչ ստուերք է (առաք) . այլ ջուր այնմ մարդոյ է , որ խղճին ուսիցէ || : Ա՛յս յաւակատիս վանդհէլոց պատկանի , և ոչ թէ ուսուցք կամ պահոց . զի ըստ վերոյ գրեցելոցս՝ հեթանոսաց գարձելոց ոմանք , որ ցանկային զզոհեալն խրախճանօք ուսել , երկիւղածք գայթակղէին յայնցանէ , և խղճէին զայնպիսի կերելեան . քանզի յերկիւղէ հզօրապունից՝ թէ և ընդ նոսա ուսէին . այլ խիղճ իւրեանց տանջէր զինքեանս , որ առ ջուր և պիղծ . նմին երի առէ՝ * Լաւ է ոչ ուսուել մին , և ոչ ընդել գինի . և ոչ որով եղբայրն քո գայթակղէ , կամ գթէ , կամ տկարանայ || :

Նոյն թէ սիրելի մեր էջէ այս , տեա՛ զի կորնթացեան յայտնապէս՝ ուր ասաց . * Բայց զգո՛յշ լերուք՝ գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթակղութիւն լեցի տկարաց || : Ա՛նդ պատուագոյնք մեկնաբանէ զայս և զՀռոմայեցւոցն քան այսպէս * Եթէ ոք տեսանիցէ զքեզ՝ որ ըզգիտութիւնդ ունիս քաղքեալ ի սեղանոյ , ոչ ապաքէն խիղճ մատց նորա՝ որ տկարութեամբն զգաճեալ է , անդրէն շինիցի ուսել զզոհեալն . և կորնչիցի տկար եղբայրն ի քում գիտութեանն , վասն որոյ Քրիստոս մեռաւ (ա . Կորն . Ը . 10 . 11) : Ա՛ս այսպէս յանցուցեալ յեղբայրս , և զխիղճ մատց տկարացն զայրացուցեալ , ի քո մեղանչէ : Ա՛ ասէ որով եթէ * Կերակուր գայթակղեցուցանէ զեղբայրն իմ , ոչ կերայց միս յաւիտեան , զի՛ զեղբայրն իմ գայթակղեցուցից || :

Ա՛հա ի վախճան այնքան տարուբեր խրատական բանից , որբազան առաքեալն Քրի՛ստոս՝ զանձն իւր եդ գրաւ առաջի ամենեցուն , և ինքեամբ եցոյց զօրինակ եղբայրսիրութեան և սիրաշահութեան : Ա՛յս ոչ են հաւասարձակախօսքն , թէ առաքեալն Պօղոս հրամայեալ է ուսել զամենայն անխտիր :

Յեռանեա , թէ որպ խնդրօք կալաւ զնա . նախ՝ ըստ առանելոյ ժամանակի , տեղւոյն և անձանց ներուհակա-

Ջորրորդ նեցուկ ընդդիմակային պահոց։

Ջորրորդ նեցուկ ընդդիմակացն էն, թէ մեք մարդիկ տկար քննութեամբ զգուծեալ էմք, ոչ համաձայնին կէցուքէ կէնաց մերոց ուսեսոյք պահոց՝ ոսպն, մխեռք, և այլ այսպիսիք։

Ընդ այս համառօտ ասել հարկաւորի միայն զբան մարգարէ թագաւորին Դաւթի, թէ * Մի խոտորեցար սիրտ իմ դանիւք չարութեան, պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ որ գործեն զանօրէնութիւն (սաղ. ՃԽ. 4)։

Եւ թէ միրաւի վասն տկարութեանն ոք հարկէացն ուսել յաւուրս պահոց զիերակուր ուսեաց, այնպիսին եթէ աշակերտ է աստուածային Պօղոսի, պիտի զգուշութեամբ պարտ է առնել։

Ասէ՝ ահա և դուք մի՛ առ ՚ձ, հաստատելով ՚ի մեզ իւրում, եթէ ատելիներ չանձնէ իմիք ՚ձ զայս տկարութեանն իմ, պարտական եմ զիմոխարէնն էերեալ աւուրցս պահել, կամ չեա այնորիկ պահել, և ոչ սովորաբար ուսել։

Երկրորդ՝ այնպիսի պատճառաւորն, լուեալն ՚ի տան իւրում պարտ է ուսել, և ոչ առաջի քաղցից խրախճանութեամբ և հեգնելով զօրինապահան հանդերձ օրինադրօք. զի մի՛ գայթակղեցին եղբարք, վասն որոց Քրիստոս մեռաւ։

Եւ երրորդ՝ այնպիսի անձն, որպէս զայլ ներգործական չանցանան, նոյնպէս և զպատակերութեի իւր՝ հարկաւորի պատկառանօք չայտնել խոստովանահօր իւրում, և զապաշխարանս ընդունել ՚ի նմանէ՝ որպէս ղեկ քժշկութեան ՚ի հոգևոր քժշկէ իւրմէ. զի մի՛ այն ընդարձակութեան իւր՝ անպատիժ մնացեալ քեղեցուցն, և ինքեան ունակութեան չարակից լինիցի. որով օր ըստ օրէ ատելն խղճահարութեանք իւր։

Հինգերորդ նեցուկ ընդդիմակացն Պահոց։

Հինգերորդ՝ ասեն ընդդիմակքն, թէ ջուրկն վան անուռոյջ կազմուածոց մերոց պատուիրեալ են մեզ ոչ պահել։

Ա.յս անուան վասու նոցին պատասխանել՝ նախապէս անձնիւրոց խիղճն վարդապետեցէ ինքեանց։ Ա.րդեօք տեսեալ էին զոք ջուրկ կամ գնուրտացն աստիճանաւոր՝ մինչ և էին ազգաց, երբեք ջատագով Աստուածաստիճան և Առաքելադիր ըստ մեր աստ գրեցեալ Պահոցս. որ այնպիսիքն առուղջ անձանց պատուիրեալ էրատեսցեն պահել եկեղեցական օրինօք, և ակարացն հրամայեսցեն ոչ պահել. զի այնոցիկ պատուէր կամ էրատքն ուղիղ վան օգտի հնազանդելոց համարիլ կարասցէ՝ ի խոհական եղբարց։ Ա.հա միշտ հատարակապէս նոքա հեգնեն զպահս, և զպահացողսն ծաղր առնեն. վան որոց պատճառս՝ ի բերան դնեն միջակ խղճահար եղբարց զակարութիւն զնուեն. զի տակաւ առ տակաւ ընտելացին կամաց նուբեանց։

Երկրորդ՝ ասացեն ջուրկնէն, թէ մարդիկք երկայնակեաց և առուղջ էրէն ի դարս ժամանակաց. յորժամ ոչ ուտէին զմիս և զգանազան համադամ կերակուրս, թէ չէտ ուտել սկսանելոյն նոցա։ Ա.թէ ուտելն զնուեանց օգտակար է, ահա զաղմաց ծնօղքն առանց պահոց են յԱսիա և յԵւրոպա. վան որ միւս ծնունդք նոցա՝ ըստ մեծի մասին տկարութիւք զգածեալք են, և ախտաց գառնիկքն գիւղականք և քաղաքականք, մինաեսակ խաշոյ կերակրովք և պահօք քաջառողջ և պարարտք են. և տկարացեալքն ի նոցանէ՝ առանց ջժշկական նուբը դեղոյն ըստ կարեանց գառնիկ ձարտարութեանց՝ դիւրաւ ջժշկին քան զքաջ ջժշկաց հանամատարելան։

Երրորդ՝ եթէ ընդարձակ ամ ինչ ուտելն առուղ-

Ջարար և օգուտ է բնութեան մարդոյ • վասն կը նոյն
բժիշկն զակատացեալ անձինս ալգելուն ի տովտա-
կան կերակրոց խրեանց , խղճահարին հրամայեն ըստ
Առաքելոյն՝ գանջար ուտել , և այլոց՝ միայն անժուր
հաւ ջրոպայ և միս ձագուց • որով յայտնեն , թէ
պարարտ կերակուք հակառակ են առողջութեան և դե-
ղերէց խրեանց : Եւ մանաւանդ բազում դեղերայք
բոլոր բժշկաց յարմարոց և ի խոտոլինաց են • կար-
ծեմ՝ ոչ գոյ յաշխարհի օգտակար ձար և դեղ ինչ՝
որ ի մսոյ և կուղոյ կովուց կազմեցին վասն գնութե-
նեկան ներքին ցաւոց և տկարութեանց : Որերեւա
դուն ուրեք վասն արտաքին վէրաց պիտոյացին իւղ
կովուց և կաթն մաքեաց : Որթ արմատք և գանջարք
զայս ունին զօրութիւն՝ յառողջութիւն զրկեալն վե-
րադարձուցանել ի նոյն • զիարդ ոչ կարեն յառող-
ջութեան զեղեալն պահպանել անվտանգ • քննեա-
ցեն գնագէտ բժիշկք դարուս :

Որ երրորդ՝ գնագէտքն որոշեացեն • մարդն առա-
ւել պէտս ունի ի դարմանի կերակրոց , թէ անասունք
և գրաստք : Որա անհուն անասունք , ոչխարք և պա-
ճարեղինք , ի սկզբանէ արարչութեան մինչև ցայժմ
խոտեղինօք դարմանին , ինքեանք նոքօք պարարտա-
նան , և զաշխարհ ամ ընուն կաթամբք և իւղովք , և ի
վախճանի պարարտ մսով քրեանց զմարդիկ կերակ-
րեալ պարարտացուցանեն : Որամբք և եղինք զծան-
րութիւն արօրատրութեանց երկրի տանին , զայլս և
զբեռինս բառնան • և զպարագայս մարմնոյն ի պէտս
մեր աճեցուցանեն նոյն խոտոց զօրութիւքն : Որեւք ,
ձիք , և այլ զանազան գրաստք զեամ դժուարութի մեր
դիւրացուցանեն , թէ քարձմամբ բեռանց , և թէ ի
ճանապարհորդութե մերոց , այնքան վիթխարի մարմ-
նով միշտ ածին և զօրանան նմանապէս խոտով և
ընդեղինով : Որաև ոչխարք ոչխարք զարշանք ըստ մեծ-
մասին խոտով քրեանց ճարեն , և թռչունք՝ ընդեղինով ,

և՛ գաղանաց սկսաւցեալք՝ գնութեամբք գտանել զարմատս և զխոտս, որովք ապաքինեն զցաւան։

Ոչխար մարդն զնաիր ոչ կարէ առողջ և բարեպէս բանջարեղինօք և ընդեղինովք անանիլ. ուր թէ և՛ գաղանաց յաճախ մսակերից կեանքն են սակաւակեաց։ Ոչ ատն որոց Արարիչն գնութեան՝ և սկզբան հրամայեաց մարդոյն զքաղցր բանջարեղէնս, և՛ սերմանեաց բուսեալ զընդեղէնան ուսեալ՝ և վայրի գալարուռջ, ուր գնակեցցէ զնախանին մեր, և ապա՝ և տուգանս անպատուութեան մերոյ հրամայեաց կետ ջրհեղեղին ուսեալ զմիս, ըստ որում ուխտեալէր՝ ոչ ևս ջրհեղեղաւ կորուանել զերկիր։

Վեցերորդ Ներսիսի ընդդիմակացն Պահոց։

Երկրաւորաւս լմնասանացեալք՝ որ զերկիւղած տեառն յիմարս կարծելով ասեն, զընդեղէնս ուսեալ Աստուած Թուչնոց հրամայեաց, և զխոտեղէնան անասնոց և անբանից. մեզ մարդկանցս պարգևեալ է զամ բարութիս աշխարհն. զի զայն ամ վն մարդոյ արար։

Այն երկու պարբերութեանց զառաջնոյն զբացատայտութիւն, ի հինգերորդ յենարանաց խրթնոց, ի բժշկաց՝ մերս պատասխանովք շատացին։ Բայց վն երկրորդին՝ զայս համառօտ հարցանեմք, թէ սիրելի եղբայրք, ոչ՝ որ արգելու զձեզ զամ ստեղծեալ բարութիւնան Աստուծոյ՝ ըստ իւրաքանչիւր ժամանակի ուչ վայելել յորոց անուրժին քիմք և կամք ձեր։ Ակայն զրկ խրատանացեալն յԱստուծոյ Սողոմոն. *Ամենեցուն ժամանակ է, և ժամ ամ ինչ զոր գործեսցէ երկնից։ և թէ՝ *Ամենայն ինչ զոր գործեսցէ՝ բարի է ի ժամանակի իւրում (Ժող. Գ. 1—11)։

Եթէ ասիցեն՝ ամօր մի՛ է առաջի Աստուծոյ,

զինչ հարկ է զանազանել զօր ուժեաց, և զօր պահից. զինչ զանազանութիւն է ի միջ հինգշաբաթից և ուրբաթի ըստ լինելութեանն՝ օր: Ասել է նոցա, օր էր արուեստագործութեան վեցերորդն՝ յորում առեղծան ջրաղացն՝ սղոցն, գաղանք, և մարդիկ, որք կայտառէին հրճուանօք: Օր էր՝ յորում յարգելեալ պլատղին կերին, և թաքեան ի ներքոյ ծառոց ամօթալի գիմօք: Օր էր՝ ծննդեան կայէնի և Հաբէլի, և ուրախանային ծնօղքն, թէ ծնաւ մարդ Աստուծով: Օր էր՝ երբ ապան կայէն զՀաբէլ եղբայր իւր, և ծնօղք նոցին երեսուն ամ սգապեաց եղեն վասն միոյ նոյն աւուրն:

Ասուրք էին՝ երբ մարդիկ բաղմացան ի վերայ երկրի, ուտէին, ըմպէին, և զկանայս գեղեցիկս առնուին ի դստերաց մարդկանց. նմանապէս աւուրք էին՝ երբ Ջրհեղեղն եկն, և եբարձ զամենեսեան: Օր էր՝ յորում ծնաւ Իսահակ ի բերկրութիւն Աբրահամու և Սարրայի. և օր էր՝ երբ Աբրահամ գաղտ ի Սարրայէ տարաւ զԻսահակ ի զենուլ:

Ասանց երկարութեան բանից, օր էր՝ որ ծնաւ փրկիչ աշխարհի. հրեշտակք պարտաւեալ եղեն՝ փառք ի բարձունս Աստուծոյ, և մոգքն ընծայաբերք լինէին: Օր էր և այն՝ երբ նոյն փրկիչն խաչեցաւ. արեգակն խաւարեցաւ, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան. և վարագոյր տաճարին ցեղաւ: Աստ ըստ հուսկն ասացից, օր է՝ յորս մեք կամք և վայելեմք ըստ բարութեան երկրի պէս պէս ուրախութեամբք, որպէսզի և դստերօք. և օր է այն՝ յորժամ բնութիւնք արարածոց հրդեհեալ կիզուն, մարդիկք ասեն լեռանց՝ թէ անկերծուք ի վերայ մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ:

Ասյս ամ աւուրք են՝ որք եղեն, կան, և լինին. զնաղդ ներգործութիւն նոցին և վայելչութիւնքն ի նոսա իջ եղեն և լինին ի մի և ի նոյն որակութեան,

աղաչեցի՝ ի փոփոխութեան և յայլայլութեան տարու-
բերեն տատանմամբ . զի սակս ասաց որ ասացն՝ Թէ
* Ամենայն ինչ որ գործեաց՝ գեղի է ի ժամանակի
իւրում ‖ :

Ոչխա և գառինք են աւուրք պահոց ի նախնեաց սահ-
մանեցեալք ի զտուն գազանացեալ կամաց մարմնոյ
մերոյ , և ի պատասխանատուութեան ժամուն , ուր
ոչ լինին հոգիք մեր ատեան զմեզ , և ոչ օրինադիւրք
պահոց՝ ամբաստանիչք զանձանց մերոց . ըստ որում
եղեալ է ի ձանապարհի կենցաղոյս , իրաւախոհ ընդ
ոսոխի մարմնոյ մերոյ . և զերծեցեալ աւուրան պահոց՝
տալաշխարութեամբք ի մխիթարութիւն հոգւոց մերոց :

Պանդխտութիւն ի փրկչէն մերմէ՝ ըստ վերոյ գրեցե-
լոյն , նոյնպէս և ննջեալքն զոյն ուսանք առնել .
* Հաստուցանել ամենեցուն զպարտս , և մի՛ ումեք պար-
տական գտանիլ (Հռոմ . ԺԳ . 7) : Տիւնա՝ Թէ իցեն
ընդդիմակացն զօրել փաստք՝ վասն անպիտանութեան
պահոց , ըստ կարծիս իւրեանց յաւուրջ մատուցեն ի
քննել . ապա Թէ ոչ՝ շատացին ցաստ յստակ գրեցելովք :

Այ՛ և այլ զօրել վկայութիւն յոյնպիսիս յու-
սացեալն՝ ի նոյն Պաւղոս առաքելոյ առ իւրն Տիմո-
թէոս , որ ասէ ,, Այլ հոգին ասէ յայտնապէս ասէ ,
,, Թէ ի ժամանակս յետինս՝ քակտեացին ոմանք ի հա-
,, ւատոցն , և հայեսցին յոգիս մոլորութեան , և ի վար-
,, դապետութիւնս դիւաց՝ կեղծաւորութիւն . ապա-
,, բանք , խարեալք իւրեանց խղճիւն մատց . որ ար-
,, գելուցուն յամուսնանալոյ , և ուրկնիցեն ի կերակ-
,, րոց՝ զոր Աստուած հաստատեաց ի վայելել հաւա-
,, տացելոց , և ոչ գիտեալ իցեն ի ճշմարտութեանն
,, վերայ . զի ամ արարած Աստուծոյ բարի են , և
,, չիք ինչ խոտան . մանաւանդ որ գոհութեամբ ըն-
,, դունիցին . զի սրբի բանիւն Աստուծոյ՝ և աղօ-
,, թիւք (Ա . Պետ . Դ . 1—5) :

Այլեւս ամ ընթերձանելեաց՝ լսել ճշմարիտ

եղուտ նոյն Առաքելոյն առ իւրն Տիմոթէոս՝ Ի նոյն ինչ գան։ * Մխտդիր ընթերցուածոց վարդապետու-
թեան, ասէ՝։ Ցանդիպեա և ամօք առաքս զմիտս անխարդախ ունելոյ՝ ի գիտել որ ամ գանիք մեր մինչև ցայժմ վասն Լծոց Աստուծոյ մերոց է, այսինքն պա-
հոց. որում առացաւ՝ * Յամ ծառոց կերիցես. քայց՝ ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի, մի՛ ուտիցէք։

Ցանդիպեա և մեք յիշ ուրեք երբեք արգելու յանդգնեցաք զոք յամս չուտել յորոց ախորժին կամք և բնութիւնք իւրեանց՝ յաւուրս ուտեաց, քայց միայն յաւուրս պահոց պահել ըստ Աստուածադիր Առաքելոյն և Հայրապետական կանոնադրութեանց։ Վասն ի վերոյ նշանակեալ հրաման վարդապետին առ մերել ի աշակերտան Տիմոթէոս՝ ոչ վասն պահոց ընդ-
դարձակութիւն նմա գրի. այլ վասն ամ խառն և արգելեցեալ կերակրոցն հրէից, ևս և յամուանուէց. որում Աստուածդ և հրաման ածել և զազմանալ։

Ո՞յասիկ ունելով մեր ի մտի, մի՛ փոխեացէ ոք զենթակայն նպատակի մերոյ. և զխաբէութեանցն ձեռնարկեալ՝ ասացէ, Առաքեալն հոդով արքով հրաման տայ յամենայնի ուտել. թէ և անուրբք լինիցին ուտելիքն, արքին ասէ՝ զանիւն Աստուծոյ աղօթիւք. վասն որ հայրապետք պահել հրամայեալ են։ Ո՞յել է. այլ պահք պահելոյ կանոնադրութիւնքն, և այլ յաւուց աւուրան յախորժելոց արգելքն զհատուածեալս անպուրբ և պիղծ անուանակոչութիւք. և թէ ոչխտիկս, աստուածք զինն ի տեղւոջ իւրում։ Ո՞յսա կանխաբանեմ նոյն Առաքելոյ յիշ ուրեք վերակնելն, թէ * Պատուական է ամուսնութիւն, և պղծութիւն՝ ամուսնանալն։ և զատանալիսն ի ձեր յաւուցեալ վկայուեն՝ թէ * Որ արգելուցուն յամուսնանալոյ։ ոչխտիկ ծանուցանէ, թէ ոչ է արժան զոք արգելու յամուսնութենէ։

Ա՛ռ մինչև ցայժմ վասն աւուրց պահոց խոսեալ եմք, և՛ ի միս ածելոյ, թէ Աստուածադիր են պահքն,

պարտիմք պահել զժառանգեալ աւուրն սրբութիւն ,
հեռանալով ի պարտաւորացուցիչ կերակրոց և յըմպելեաց ։
Իսկ այժմ տեսանեմք , որ վճիռ ժանդիրն՝ յամուսնու-
թենէ արգելողաց՝ Առաքեալ , և վասն արդար ամուս-
նութեան ևս ժամանակ յառաջացուցանէ պահելոյ , յա-
աել ևս առ Կորնթացիսն՝ ,, Այլ վասն որոյ գրեցէքն առ
,, իս , բարւոք է մարդոյ ի կին մարդ չմերձենալ ։ բայց
,, վասն պոռնկութեանն , իւրաքանչիւր զկին կալցի ,
,, և իւրաքանչիւր զկին՝ զիւր այր կալցի ։ կնոջ՝ այր
,, իւր , զպարտն հատուսցէ ։ նոյնպէս և կինն՝ առն իւ-
,, րում ։ զի կին՝ մարմնոյ իւրում ոչ իշխէ , այլ այրն ։
,, նոյնպէս և այրն՝ իւրում մարմնոյ ոչ իշխէ , այլ
,, կինն ։ Մի զրկէք զիմեանս ։ բայց եթէ ինչ ի միա-
,, բանութենէ առ ժամանակ մի , զի ուխտիցն պարա-
,, պիցէք , և դարձեալ ի նոյն դարձջիք , զի մի փոր-
,, ձեսցէ զձեզ սատանայ վասն անխառնութեանն ձե-
,, րոյ (ա ։ Կորն ։ է ։ 1 — 5) ։

Ա՛րդ՝ տեսանէք , որ Առաքեալն բայ ի հաստատակ պահոց կերակրոց և օրինաւոր ամուսնութեան աւուրս պահոց նշանակէ այսու բանիւ ։ * Բայց յորժամ ուխտիցն պարապիցէք ։ Ուրեմն կան և աւուրք պահոց ամուսնութեանէ ։ Յորմէ զայն՝ որ ասէ * Բարւոք է մարդոյ ի կին մարդ չմերձենալ ։ ՚Ո՞րչափ ունի մարմնաւորն ասել՝ Յորժամ ուխտիցն պարապիցէքին ։

՚Ո՞ի թէպէտ օրինադիրն արդար ամուսնութեամբք են , բայց հրաշափառ վիրաւէտս աւուրք սէրտունակութիւնք , կամ խոստովանութեան և ձաշակման աւուրք՝ աւուրք սրբութեան և ուխտից են ։ ոչ և աւ հրէայն էր այս օրէն՝ մերկնիլ յանկողնոց , որ է պահեցողութիւն մարդկան յամուսնութենէ ։ և սակս դառնալ ի նոյն , զի մի՛ փորձեսցին ի սատանայէ , որ լինի միոյ կողմանն յանգոհունակութենէ մերձիլ աւուրս անկողնին ։ Եւ զայս հրամանս ուր եթէ Առաքեալն ինքնին գրեաց աւ կորնթացիսն , այլ նոքա գրեալ հարցումն արարին

զբրևատանէութեանն ուսանիլ զբարեկարգութիւն և
զօրէնս։ Եւ նա որպէս լշխատ օրինաց այնպէս սահ-
մանակից։ Ո՞ւստի որպ ասէ՝ * Գրեցէքն ուս[illegible]։
ամենայնիւ ասէ, եթէ ոչ ի Տեառնէ ինչ ուսանիցես։
Այս ընդ պարարտացուցիչ կերակուց՝ առհմանեցաւ և
պահք ամենայնի, ուխտիցն պարապեալ աւուրք։

Եւ եթէ այսպէս պարտ է քրիստոնէին կեալ,
զինչ[illegible] առ Տիմոթէոս՝ հոգևոյն Աստուծոյ, վարդա-
պետ զնոսա լայն, կոչէ յամենայնէ և ի կե-
րակրոց զարգելոյն։ Այլ երկիւղածութեամբ, և
մի՛ զի գրեցելոցն ի հարկաւոր ժամանակի. զի և
Աստուած ասաց՝ կորնչանել զնինուէ. քայց զղջումն
և ապաշխարութիւն նոցա հարկապրեաց ոչ կորնչանել։

Ա. յայտ առեալով Աստուծոյն, թէ մարդք չարք
և կախարդք յարեան հակառակ քարոզութեան և ու-
ղիղ վարդապետութեան Աստուծոյն, տղմիլ զմիտս
հաւատացելոց, զոչ ինչ արտաքս կարէին նշմարել
յաստուածաբան ուսմունս նոցին, և ոչ յամբիծ վարս
գնացից սրբոցն, ձեռնունայն գտեալք յայն ցանկու-
թեանց սրտից իւրեանց. զի ամօք առեալեր զանընչա-
ւիրութիւն, զանարատ վարս, զուղղափառ քարոզու-
թիւնս, զաստուածասէրս հրաշագործութիւնս, որովք
օր ըստ օրէ յաւելանային ի հաւատս Քրիստոսի. զի
եթէ հակառակորդք նոցա զայնպիսեաց ինչ ասէին ընդ-
ցանէ, անընդունակ լինէին քանք չարեացն, գուցէ և
քարկոծ ի հաւատացելոցն լինէին։ Ա. Ոյ ըստ հոգւոյ
դեղաւորեաց արհաւիրագործն՝ որ վասն շահուց իւրոց
յարոյց զձեռնտուսն Ասիոյ՝ ասելով * Ա՛լք՝ գուք ձե-
զին լսեք գիտէք, զի յայսմ գործոյ է շահ մեզ
(գործ. ԺԹ. 25)։

Հանգոյն այսմ և հակառակորդքն յարուցանէին վնա-
սակս զհաւատացեալսն ի վերայ Աստուծոյ, թէ սուտ
արգելուն զձեզ յամենայնէ, և մեկնեն ի կե-
րակրոց. զի այսուհանդերձ անձնական ինքնասէր զհաւատացեալսն՝ առնել նմա արտացեն նոցա զԱստուա-

„ և գնաց ի Թեսաղոնիկէ. Կրեսկէս՝ ի Գաղատիա. ...
„ Տիմոթէոս „Թուղթս զաղ առ նոս վաղա-
„ ակէր. զի Դեմաս եթող զիս՝ և սիրեաց զաշխարհ,
„ Գաղատիա. Տիտոս ի Դաղմատիա: Ի Ղուկաս միայն է
„ (Ե. պետ. ի. 1—6): Եւ թէ ոչ ամէն էին նոքա, ասէ
„ անուանէր ի հաւատս ... խոստովին ի նոցանէ
„ հան Աշխատութեանն. մարդ առաքեալք մօք,
„ ուր կային Մոլսէսի. նոյնպէս և առքա հակառակ
„ ակէր ... Ա. ոմն յոյն Յովհան և Յամբէան հակա-
„ ամէն էին. ի Սամոսի և ի Պատմոս. ի Կոս ի Կնիդոս
„ ամէն. ի Ռոդոս ի Պատարա. ի Կիպրոս ի Կիւրենէ
„ ամէն. ի Ղիբիա ի Կիլիկիա. ի Գաղատիա ի Փռիգիա
„ ամէն. ի Պամփիլիա ի Պոնտոս ի Կապադովկիա
„ ամէն. ի Ասիա ի Թրակիա. ի Բիւզանդիա ի Մակեդոնիա
„ ամէն. ի Դաղմատիա ի Դաղատիա. ի Դաղիլիա ի Հռոմ
„ ամէն. ի Հռոմ ի Կորնթոս. ի Կորնթոս ի Դաղիլիա
„ ամէն. ի Դաղիլիա ի Դաղմատիա. ի Դաղատիա ի Մակեդոնիա
„ ամէն. ի Մակեդոնիա ի Բիւզանդիա. ի Թրակիա ի Ասիա
„ ամէն. ի Ասիա ի Պամփիլիա. ի Կապադովկիա ի Պոնտոս
„ ամէն. ի Պոնտոս ի Փռիգիա. ի Կիլիկիա ի Կիւրենէ
„ ամէն. ի Կիւրենէ ի Կիպրոս. ի Կիպրոս ի Ռոդոս
„ ամէն. ի Ռոդոս ի Կոս. ի Կոս ի Կնիդոս
„ ամէն. ի Կնիդոս ի Պատմոս. ի Պատմոս ի Սամոսի
„ ամէն. ի Սամոսի ի Կղեմէս. ի Կղեմէս ի Ղիբիա
„ ամէն. ի Ղիբիա

,, Ա.ղեքսանդրոս քաղուամ չարչարանս եցոյց ինձ. հա-
,, տուսցէ նմա տէր ըստ գործոց նորա. յորմէ և դու
,, անձնասպահ լինիջիր. զի շատ հակառակ եկաց քանից
,, մերոց: {}յառաջնում առեննին, ուր ոք ինձ ի Թիկոս-
,, նըս եկաց, այլ ամենեքին Թողին զիս . . . այլ տէր
,, օգնեաց ինձ և զօրացոյց զիս, զի ինև քարոզուԹին
,, հաստատեսցի (Բ. Տիմ. Դ. 8—18):

{}ուի Թէ՝ ուղղասէրք առին զբաւականուԹիւն հետախոյզ քննուԹեան իւրեանց, Թէ վասն որոյ պատճառանաց Աստբէլն տուտ սաստէ զարգելչէն յայմանուԹեանց և զխաւօղն կերլեաց: {}այտ է Թէ՝ վասն խարեալ խղճիւ չարաչար ուսուցման նոցին, ոլք պատրել ցանկային զհաւատացեալսն յայնժամ: Եսկ յետ դադարման այնորակ քաղձանաց չարասիրաց, զկարևորն՝ ուչ եԹէ կանոնադրէ, այլ քարեկամաբար խրատէ զմեզ զամենեսեան. զի մի՛ գրկեսցուք քոլոլովին զաշխարհս, տալով զանձն իւր օրինակ մեզ՝ գիտելով Թէ * Անցեալ է վայելչուԹիւն աշխարհիս այսրիկ (Ա. Կոր. Է. 31): Ասաի առաջարկէ * Ամուսնացն և այրեացն ասէ, լաւ է նոցա Թէ կացցեն իբրև զիս. ապա Թէ ուչ ունիցին ժոյժ, ամուսնասցին (հմմտ. 9): Եւ յառաջին տանն գրէ * Ջայս ասեմ նեղելով, և ուչ հրաման տալով: Եւ ուր տէրունական է հրամանն՝ յայտնի ցուցանէ * Ա յլ կանոնամբեսցն պատուիրեմ, ուչ ես՝ այլ տէր. կնոջ կապեալ մի՛ մեկնիլ... քայց այլոց ես պատուիրեմ, ուչ եԹէ տէր. եԹէ ոք եղբայր՝ կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ լիցի բնակիլ ընդ նմա, մի՛ Թողցէ զնա (հմմտ. 6—10—12): Ի ման ամուսնուԹեան ուվոք կամի քարուք տեղեկանալ, զայս Ճառ Աստբէլոյն ամբողջ ընԹերցցի:

Եւ յաղագս պահոց զնարդ կարելին էր խոհականն պահս էր մաշեալ, որպէս Թ՛ի կորնԹացիսն է տեսանել. * ՅաշխատուԹիւնս, Թ՛ի հսկմունս, Թ՛ի պահս (Բ. Կոր.

ՊԼ. 5)։ Եւ թէ * ՚ի քաղց՝ և ՚ի ծարաւ. ՚ի պահս բա-
զում անդամ (Ժ՟Ա. 27)։ Արդ եթէ, ոչ եթէ զօ-
րէնս պահոց առ լուծանել, այլ զկերպն պիղծ և
անմաքուր խորտոցին ըմբերանէ, այնու թէ՝ Ամե-
նայն ինչ սրբի բանիւն Աստուծոյ, և աղօթիւք։ Ար յե-
տոյ բան բացատրիչ է կամաց Առաքելոյն, որ ասէ՝
* Զի ՚ի նոցանէ են՝ որ մտանեն տանէ ՚ի տուն, և
գերեն զկանայս շեղջակուտեալս մեղօք... որ յա-
ժամ ուսանին, և երբէք ՚ի գիտութիւն ճշմարտութե-
ան հասանեն (Բ. Տիմ. Գ. 6)։ Ապա որպ Առաքեալն
ըստ առաւելոյն բան * Իմաստանոյն աչք իւր ՚ի գլուխ
իւրում (Ծաղ. Բ. 14). զերկուց չարեաց զփոքրագոյնն
ընտրելով՝ * Ամենայն տրտրածք բարիք են ասէ, և չիք
ինչ ՚ի նոսա խոտան, մանաւանդ որք գոհութեբ ըն-
դունելցին։ Իբր առաքեալն Պետրոս ՚ի սոյն միտ յան-
դիմանէ զկրկնից չարայոյզն այսպէս. * Արդ՝ ընդէր
փորձէք զԱստուած՝ դնել լուծ ՚ի վերայ պարանոցի
աշակերտացն, զոր ոչ հարքն մեր՝ և ոչ մեք կարացաք
բառնալ. այլ շնորհօքն տեառն Յիսուսի Քրիստոսի՝
հաւատամք ապրիլ (Գործ. ԺԵ. 10)։

Արդ՝ ըստ որում քաջ և խնամակալ բարւոյ դաս-
տիարակ, սակաւ առ սակաւ ամրքելով զմիտս հեթա-
նոսաց առ բանն Աստուծոյ, ըստ մարդկութե ախոր-
ժելեօք կամաց նոցա օրինակաւն առաջի առնէ ըզ-
կատարեալ սէր իւր՝ նոցին ուղիղ ճշտպաշտութե,
որ ասէ՝ * Նախանձեցուցանեմ զձեզ ՚ի նախանձն Ա-
ստուծոյ. զի խօսեցայ զձեզ առն միում, իբրև զկոյս
մի ածել յանդիման կացուցանել Քրի (Բ. Կորն. ԺԱ. 2)։
Արդ գայ ՚ի յայտ, թէ տակաւին ցրտութեւն ՚ի հա-
ւատս և գաղջութեւն ՚ի վարս նոցա էին, որ հեռևե-
ցուցանէ. * Բայց երկնչիմ, գուցէ որպէս օձն խաբ-
եաց զԵւա խորամանկութեամբն իւրով՝ ապականեա-
ցեն միտք ձեր ՚ի մաքրութենէն որ ՚ի Քրիստոս։

Եւ առաքելոյն իւր Պետրոս ասէ՝ * Զի յաւուրս

յետին եկեսցեն արհամարհօղք՝ այպանօղք, ոքք ըստ
իւրեանց ցանկութեանցն գնայցեն (Բ. պէտ. ՟ք. 3)։
Որ իսկապէս տեսանի այդ այս գան յաւուրս մեր։
Նա մեկնիչն կաթուղիկեայց շնորհալի Սարգիս վար-
դապետ զկնի ցուցանելոյ զտեսակս մոլոք խաւարե-
լոց, ծանուցանէ և զգործս. * Կրկին ջար և բազմա-
պատիկ, ասէ, մարդոյ անտէրունչ շրջիլ ըստ իւրում
ախորժակացն, և անխտիր զնոր ցանկութին կատարել։
Չյաւատեմ աստանօր, թէ Պաւղոս ուչ վասն լու-
ծանելոյ զպահման գրեաց զայն գան, այլ՝ ի չարէն թե-
լադրեալ զաւելորդ բարբանջմունն խափանեաց։
Զնմին համամիտ և արժանին գգուշանացն Քրիստոսի
ածաղգեացն Իգնատիոս՝ ի Թուղթն առ Ուրիոն սար-
կաւագն խրատէ այսպէս. * Եւ զքեզ տղայքեմ առա-
ւել լընթացս քո, և փութալ՝ ի հաւաստարութիւն
բանից սրբոց, զկարուութիւն տկարաց բառնալ, որպ
զի կատարեացես զօրէնսն Քրի. պահօց և աղօթից
առ՛ պ կաց, քայց մի՛ անչափ. զի մի՛ դու լինքնին գլես-
ցես զքեզ։

Տե՛ս՝ որ զպահքն պատուիրէ, և զջափազանցն ար-
գելու. * ՟ի գինւոյ և՟ի մսոյ, ասէ, մի՛ ամենևին գործ
համարելով հեռացիս. այլ ըստ ժամանակի վն պար-
կեշտութեան։ Նթէ ըստ ժամանակին ՟ի գործ զնո-
ւին արկանէ, ապա և՛ և ժամանակ՝ յորոց պարտ է պա-
հել և հեռանալ. զի ժամանակն հոսանուտ։ Եւ՟ի
ՀՀՉ Թղթոյն որ առ փիլիպպեցիսն ՟ի վախճան քանին
պատուիրէ. * Ջտօնս մի՛ արհամարհէք, զպահս քա-
ռասնորդացն մի՛ կոխէք. զի զնմանութիւն վարուց ան
ունի. մի՛ անտես առնէք զշաբաթ չարչարանաց ան.
զբարեշաբաթ և զուրբաթս պահեցէք. զաւելորդս
ձեր աղքատաց տայք։

Ո՞ր ինչ կարէ ոք ասել, մի՛ թէ ածաղգեացն Ի-գ-
նատիոս հաճելոյն պաւղոսի՝ անհաւանն էր ընդար-
ձակելոցն նորա զմիմ ինչ յուսել ըստ տանելոյ

ախորժակաց ուտողին, և զխղճելիսն անուամբն Ա՛ր
սրբել. քա՛ լեցի, այլ նա կարկեաց զբերանս բանասիրկ
ուաց. և սա զպահոց հարկաւորու-թինն կարգադրեաց,
զորս պահեն մինչև ցայժմ եկեղեցիք Ա՛ր ազգաց:

Ա՚ն առ քեւրե ենթադատու-թի՛ երկիւղին Աստու-
ծոյ զարգացելոց՝ ասել, թէ մինչև ցաստ աստցեալքն
՚ի Ա՛ր գրոց բաւականք են ՚ի խրատ վասն հարկաւո-
րու-թե՛ց ընդհմաբանից լուծմանց, որք յեցեալ էին
յեղեգնեայ գաւազանն անզօր. և ո՛չ ընդունին մեզ
ժամանակն յետ այսորիկ հարցանել ցհարսն մեր՝ զի
պատմեացեն մեզ զարժանաւորու-թի՛ պահոցն, և ցծեր-
սն՝ զի ասացեն, թէ ո՛րք և ո՛րպիսի անձինք յետ
Առաքելոցն քա՛՝ ընդհանուր եկեղեցւոյ կարգադրե-
ցին պահել զպահս. ապա ՚ի նոցունց ուսեալ իւրա-
քանչիւր ազգաց հայր և հայրապետք խրատիչք եղեն
գրոհի իւրեանց:

Ա՚ստացաւ յետ Առաքելոց. զայդ պարտ է գիտել
ըստ անձնական օրինակի և խրատական բանից նոցա,
որք գրեցան ոմանք աստ մինչև ցայժմ, և ըստ մեծ-
մասին կան և ծնան հոգւովն Աստուծոյ հնչեցեալ ՚ի
տառս իւրաքանչիւրոցն: Իսկ յատկապէս կանոնա-
դրեալքն ՚ի նոցունց Առաքելոց՝ որք պատուեցեալք
են ՚ի ժողովոց, և կարգեալք ՚ի կանոնագիրս, պահին
յընդհանուր եկեղեցւոջ որպ երկնատաք գանձ անա-
պատւելի: Ապա ՚ի վերայ՝ աշակերտեալք նոցին հարք
և հայրապետք Ա՛ր ազգաց՝ ի՛ որ ժողովք, և ի՛ որ
առանձնական ՚ի խրատական մատեանս իւրեանց լի՛ ա-
րարին զայնպիսի կանոնական հրամանան սրբոց Առա-
քելոց ազգի ազգի յորդորանօք, օրինակօք, և վարդա-
պետու-թի՛ք ՚ի սէր երկուց դաւհեկանաց և սպառնի
խոստմանցն քա՛ ՚ի միւսանգամ գալստեան Հատուց-
մանն իւրոյ: Ա՚յդ՝ ժամէ ազջուն և զկանոնական
տառան հարցն ժողովոց, և յատկացեալ հայրապետաց
ազգին մերոյ լուսաւորչակրօնից:

Կանոնք վասն Պահոց։

Պահեսցեն՝ ի քառասնորդս սրբուիք, հեռացեալ յամէ չարութիք և՝ ի պարտատ կերակրոց • այլ մսկ հացիւ և ընդեղինաւ և ջանջարուվք շատացեալք։ (Առաք • ը • և ճ։ Թադէոսի առաք • իը։ Գրիգ • ոճ • ը։ ջ, Բարսղի • ժէ։ Լաւոդ • խէ։ ջ • Եպիփ • ա)։

Պահեսցեն՝ ի երեքշաբաթի ծոմով • զի յայնմահաւուր գուշակեցաւ խորհուրդ չարչարանացն Փրկչին։ (Առաք • ջ։ Թադ • իդ։ Եփրեմայ • ա)։

Պահեսցեն յուրբաթի ծոմով յաղագս չարչարանացն Փրկչին։ (Առաք • ջ։ Թադ • իդ։ Եփր • ա)։

Պահեսցեն միաբանքեր ամաւջ շաբաթի մի, և կամ հանգքան զամսոյն ուրբաթ ամսոյ շաբաթի մի։ (Թադ • իէ։ Ներսէսի աշտարակեցւոյ • լը։ զայսմանէ տես կերակուր 239, յերկրորդ հատ • պատմ • Հայոց)։

Պահեսցեն յատուկ քան զամսիկ է շաբաթի պահս։ (Սահմատայ • ա։ Եպիփ • կիսոլ • ա)։

Պահս լուծանել մի՛ իշխեսցեն՝ ի մեծ հինգշաբաթին, այլ չորեքին լիցին։ (Ը, Նիկիոյ • ճէ։ Լաւոդ • խէ։ Մխիթ • գօշ • ճծղ)։

Պահոց՝ ձկիթ, ձուկն և գինի արգելեալ է։ (Մանդակ • է)։

Պահք յիսնակին՝ վանականաց, քահանայից, ապաշխարողաց և այրեաց են • խակ ժողովրդականաց՝ ըստ օր • և զկիրակէն պահօք։ (Եվրեմայ • իէ։ Հիպոլիտոսի • իա։ Մելիտոսի • ա։ Նեքտարեայ • ա։ է, Եպիփ • ա։ Յուլ • երրասաղեմացւոյ • ա)։

Պահօղք՝ մի՛ լեցին սպասղեացք և ախտուր դիմօք։ (Գանգրայ ժողովոյն • ժբ և ժէ)։

Պահոց լուծանողաց ծանրագոյն ապաշխարութիւնքն վճռին։ (Ը, Նիկիոյ • կէ։ Ներս • աշտ • իը։ Գանգ • ժէ • ե։ Եփրեան • ա։ Ներս • Հայրապետ • խա։

ջ, նախ. ա։ վաշտապետ ժողովոյն. ժէ։ Ոսկեբ. ժա։ Սակրատ. լբ։ նախ. կիսով. ա։ Շնորհալ. ճէ)։

Պահել զկնի-դահիճս եւ զաւազակս պինդ ի հրամանի, այլ ընդ նոսին ի քէն։ (լբ, Նիկիոց. կէ։ ջ, Բարս. լա եւ ձբ։ Գանգ. ժը)։

Պահեցեն ի պինդ կոստիս մինչ ի վարդավառն երեք շաբաթ պահս։ (Յովհ. մանդակ. ը)։

Եւ ի յիշեալ պատմութեան Հայոց կարգ պահոցն գրի այսպէս ,, Ա. յո շաբաթուան ճրագ ելոյ կոչի անուանի ,, խաւարեան պահին, ունին շաբաթական, եւ ունին անուանի ,, շաբաթ. եւ են տուին. ա, պահ Եղիսեան. բ, պահ ,, ամարայնոյ՝ որ առն պահ Լուսաւորչի. գ, պահ ,, վարդավառի. դ, պահ Ասծնոյ. ե, պահ Խա- ,, չի. զ, պահ վարագայ խաչի. է, պահ Յիսնա- ,, կաց. ը, պահ Աստուածածնայ՝ որ առն պահ նոր Յա- ,, կոբոյ. թ, պահ Յննդեան եւ Յայտնութիւն. ժ, ,, պահ առաքաւորաց՝ որ եւ առն պահ նոր Սարգսի ,, Ա. յոյ եւ վասն երկուց առաց պահ յաւուրս քա- ,, ռասնորդաց»։

Ընդէ ցաստ պատուիրեալքն են առ հասարակ հոգեւորականաց եւ մարմնաւորականաց, մեծաց եւ փոքրոյն, հարստաց եւ աղքատաց արեգակնասփիւռ ընդհանուր կանոնք պահոց։ Կրեացուք սակաւ ինչ եւ զայսոսիկ պատուէրսն պահոց առ հոգեւորականան ինչ եւ նոցէ ազգաց քրիստոնէից։

Նախակոպս՝ եթէ լուծցէ զքառասանորդս կամ զբուրեքշաբաթի եւ զուրբաթի պահան, նզովեա՛ եղիցի։ (ջ, Բարսղի. ժէ)։

Վասնայ՝ եթէ լուծցէ զպահս, ի քաց որոշեցի ի պաշտամանէն։ Նոյնս առ զկանոնան պահոց լուծանոցաց եւ Շնորհալ. ճ՛ջ։

Այլ կարեմ օտար համարիլ, եթէ արդ լուծան լքեցան, քակտեալ խորտակեցան, եւ թարշամեալ թօթափեցան թակարճ եւ ծուղակ մեքենայից ընդդիմակացն

ապհաց, ուր տեսին և տեսանեն, Թէ նախատիւ ՈՅ է օրինադիր պահաց, որ յերկրորդութեան ի՛ մի է առաքեալն պաշտօն և երկրպագի յամենայնի, յերկնաւորաց և յերկրաւորաց, ի հրեշտակաց և ի մարդկանց, ի չարամիտաց և ի սուրբ-սրտեաց, Հետեւեալ՝ Լսելոյն զեան ըմբռնել չօր և վատակիցն ուր չոգաւ ոչն վերինն սկիզբնոյ ՅՈ-ՔՈ եղև սուտակիր սուձին օրինակ պահեցողաց՝ պահելիք եւ ըզատուտն սրբ և ըզատուտն գիշեր, և տանելիք առաքեալ ըզխորհուրդն՝ Նամբակ յինեն։

Ընդ նմին և պարտ եղեւ մարդկանց Վասն երկիցս ինոյն բանալոյ պատուիրել զպահս։ Նախ, ՚ի Մերտեմն, Յոլե, Նրկամարտ, Հանդեր՝ Հօմն պրկեալ, Դանիէլ՝ երեք մանկամիջ, ՚ի Նինուէ պահեցին, և այլ ընտրեալք՝ պահք Հանդցուցան Վասն երկրին։

Վասն ինչ Հանդամարտեցին ՚ի պահս, և յաղթեա առանին և՚ի Հրամարակի ըստ այնմ՝ * Տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս։ և Թէ՝ * Օրինակ ինիմք ձեր Հաստատեցէք, բանիւք, գրոցիւք, սիրով, Հաւատովք, արդեաՔեամբ։ (ա. պետ. գ. 12)։

Վասն վերադարձեալ Հոգւոյ ժողովոց և անձինք ազգաց, որք կանոնական պարսին գիտ առեալ պահս Հոգ և ուտեաց, տալով գԱստուծոյն՝ Աստուծոյ, և գնորդ կանոնի՝ մարդկանց։

Վերջ Պահոց յաղագն Մեծի։

Ա՚րդ՝ Հարցցեալ ցՀարսն մեր ըստ սովորչականին, և ասացեալն մեզ զկանոնեցեալ Հնգետասան Քի խրատուց։

,, վասն մեղաց ի վերայ ձեր մեռանի, արդարն ի վերայ
,, անարդարոց. զի զձեզ մերձեցուցէ առ Ած, սակ-
,, պետրոս (ա. պետ. ը. 18)։ Եւ պաւղոս գրէ ,, Ա՛չ
,, զի բազում անգամ մասունցանիցէ զանձն արասա-
,, լոգ. . . արդ Թէ ոչ՝ արդեօք էր նմա բազում ան-
,, գամ չարչարել ի սկզբանէ աշխարհի . . և մեր
,, օրինակ կայ ձեզ մարդկան վասնգաւոր մեռանել, և
,, յետ այնորիկ դատաստան. նոյնպէս և Քն վասնգաւոր
,, մասունցեալ պատարագ առ ի բազումս մեղս բա-
,, զոց . իսկ երկրորդումն առանց մեղաց յայտնեսցի
,, այնոցիկ՝ որ ակն ունիցին նմա Հաւատով ի փրկու-
,, թիւն (եբր. թ. 25 — 28)։

Վասն որոյ Հայոց եկեղեցի մեր ի կանոնն չորրորդ եղեռնակից ,, Ու զպատմուձանն առաջին՝ զոր զգեցու-
,, ցեր օձմամբ Հոգւոյն, մերկացար մեղօք բազ նախա-
,, Հօրն պատրանաց, զգեցար զնոյն վերստին ողորմու-
,, թեամբ Քն ||։ Եւ ի հինգերորդ եղեռնակից գործա-
,, ւոյն յորդորէ զմեզ ,, Ա՛յսօր մկրտեցաւ պա-
,, տարագ ամենայն Յորդանան, զի ելցուք ի նմա
,, Հոգի եւ մարմին, ի մեռելոցն յարութիւն ընդ-
,, հանրական. որ ոչ պահել զպատուհրանն մերկացա-
,, զանգամ. իսկ նոր Ադամ ի վեց դարուն՝ այց
,, արարեր կոտորածեալին ||։ Եւ ի հարցն յիշէ զայգեպան
փրկչին առ աղտոտ մկրտիսն ,, Ու խոնարհուելոյն ի-
,, նէ Հայրն, շինողացեր զերազ մեռելոց, որպէս եղբայրն
,, ի Բաբելոն ի մէջ հնոցին,

Ի յոթներորդն մեծի երկուշաբաթի կանոնն զգե-

թոլանց շնորհն ու մարդկութիւնս հեղելոյն, և նը-
ստեցուսանել զաղբն յօրինէ ,, Ւ ոչն ի չօրէ լս-
,, ոչ ծագեալ , լուսաւիցէ զարդարութենց զԱդամ ի
,, զրախային եդեալ անմահ անկոցն երկրագործ ||
Հայել ընդ նմին ,, Ակնջք սրդել մարդկան ոչնօր ոչ-
,, բացուք զՀօրն զնամանդ , որ մերկացաւ մեզըզ
,, վառս Արարչին , և զգեցաւ զԼծութենէն ծածկոյթ
,, վախճանակ անձառ լուսոյն || ի հաղթութենն ոչն
կանգնի ասէ ,, Ար յաղթից գոչողացըզ զբո զարու-
,, ծած ի սկզբանէ , ի պատկեր ԱՃուխեանդ զո
,, ասելոցեր զնարդ ի հոգոյ , ժառանգել նոմա զանոտա-
,, տաւ զկնամ . Խոկ պատրանօք գանաստկութենն ի
,, զրախայէն պատուոյ անկեալ ի յաւէժ կենդանու-
,, Թեանն , մահաւոր պաղով մերկացաւ զԱ-
,, վառս անառաւեր լուսոյն : Ա՛ոյ դու փրկիչ զարե-
,, լոյր՝ որ մարմնացար ի սէր կուսէն , և հեղմամբ պա-
,, ետանդ զո զոպերն զյաղցնացոնս նախատաւելդ ին , փըր-
,, կեալ զմեզ յաղիծէց նորա : Ար լոս պարտեաց նա-
,, խաօրն յաղնէն առին յօժարութենէ լմնել զբաժակ
,, չարչարանաց լոյր . զեզ ոչնչեաց զեբեդեայ . շնորհեա
,, մեզ առ զբաժակ զո փրկութեան || :

Ա՛ետրոս երկիւղած ի նմանէ և մաշին յընթեռ-
նուլն զերգ և զաղերն մօր մերոյ աբբ եկեղեցւոյ , որ ի
պատճառս մեղ մեղոյն պղծելոյ պատգ՝ վտանգաւ և
եթ անհանդուրժ ձուշակմամբն , ոչնպես հարկաւոր-
նին նախանձոյն մերոց պատասխանութենէ , և ի
դժոխս ոչնջանացն , ուչ գոռնելով զերս հնարիչ փըր-
կութեան , կատարեալ Արարչին իւր մարդեղութենէ ,
և նորա խոկ չարչարանաց՝ խաչի՝ մահուան՝ և թաղ-
մանն , զոլք ոչպա եղեալ փրկութենն պատուոյ , և ա-
զատութեն ոչնջանաց յոչն քաղցրագոյն գոռն կեր-
ակուր ; Ար ի կանոնն մեծի հինգշաբաթի զգերագանց
կանոն մարդասիրութենէ Արարչի և փրկչի իւրոյ կերգա
ասելոպատկառ զինջ , ասէ ,, Ար մարմնով և արեամբ

,, քո ցուցեր զթողութիւն մեղաց, որ միշտ պատուիրագիտ
,, ի մեզ անճախատիպ։ Այր քաւիչ վայս նոր ուխտ
,, ցուցեր յետ առաջնոյ քո՝ մահացելոցս ի ձաշակմանէ
,, նախահօրն։ Եւթէ ,, Այսօր վերատին նորոգեցայք
,, ի յանիծից նախահօրն, ձաշակելով զմարմին և զա-
,, րիւն Որդւոյն Ադ։ Այս ի հարցն ,, Նատա-
,, կանութիւնք աղբիւր՝ զկենդանարարդ ջաշխեցեր ըզ-
,, մարմինդ քո, նորոգելով զմահացեալսն յանցանօք ի
,, պատրանաց Թշնամւոյն։

Այսպէս զերգ և զողբան մեծի ուրբաթու ի միտ առցուք, որպ արժանն է. եթէ Երիքովի եօթնաւիղն պարիսպքն միայն Յեսուայ ձայնիւ փողոցն փշրեցան ի փոշի, զինարդ մեր մարդկայնոյս ոսկերք և սիրտք կարծրացեալք գոցին քան զքար և կիր այնոցիկ պարսպաց. ուր Արարիչն Յեսուայ շուրջ պատեալ Աճուրեամբն զպարիսպ մարմնոյ մերոյ, կամի խորտակել զանձնահաճ զամրութիւն կամաց մերոց. և յայսմ պատերազմի ոչ միայն Յեսու անվտանգ զերծանի, այլ հզօրն ի պատերազ-
միս՝ հուսկ ամ հեղինակական կրից՝ միգաւ ևս խոցի. զի վէպ նորին բացցեն մեզ զաղբիւրս ընդհաց. ուստի երդե եկեղեցի ի գործառոնն ,, Նա զինաւորն գե-
,, պարդեամբն արձակեալ՝ խոցեաց զկող կենարարին. ,, ուստի աղբիւր կենդանարար ելանէաւ, լուաց զի-
,, եղերս ի մեղաց։ Հոդևոմեան ,, Կացեալ ի յատե-
,, նի երկրորդ Ադամ վերատին նորոգեցաք ,, եաց Թողութիւն, համբերելով վասն զմեզ կեցուցա-
,, ցանել։ Ի սէր երկնից ,, Ձի սքանչելի տեսիլ ա-
,, հաւուր. զԱրարիչն երկնի և երկրի այսօր տեսաք ի
,, խաչին։ Տեսեալ զսէրն ի խաչին, խաւարեցաւ ա-
,, րեգակն, և վարագոյր տաճարին ցերկայր վերուստ
,, մինչ ի վայր։ Ի մանկունան ,, Որ մարդասիրատիպ
,, վասն ամենեցուն՝ ամի համբերեցեր, և ի մահու ըզ-
,, մահ կոխեցեր, երկայնամիտ տէր, քեզ փառք։
Ի՛ւր և զսաեղիս համբարձին ,, Արքայք հուստա-

„ցեալք երկրպագեսցուք նմա երկրպագութեանն. լսյան
„որ ընդ հօր ի յիւրութեան. ի քահանայից դատա-
„պարտեալ. եկեալ ի խաչ ելանել անմահ թագաւորն:
„Ո՞ր երկինք ոչ քաւէին տանիլ, զփայտ պատու-
„հասին ուսով քարշեալ, և եկեալ ի տեղի կառափ-
„ման ի խաչ ելանել: Ձիացեալ պետութեանց երկ-
„նից ընդ թագուհին ան ի նոր գերեզմանի. քանզի
„որ անմահն էր յիւրութեան, վասն արարածոյ փըր-
„կութեան զմահ ձաշակեաց անմահ թագաւորն||:

Ի քարոզն ժամերգութեանց մեծի պահոց՝ փոխա-
րէն վերոյ գրեալ մարդասիրական գործոցն
փրկչին մերոյ, զնա մարդ միահամուռ ի գոհաբանութի
հրաւիրէ „Ա՛ւրհնեալ ամենեքեան գոհացարուք, ասէ,
„զմարդասիրէն Աստ և զփրկչէն մերմէ Յիսուս քրիստ, որ
„ազատեաց զազգս մարդկան ի դատապարտութենէ
„անիծից, և եբարձ զմեզ աշխարհի ի ժամուս
„յայսմիկ խաչին իւրով, և շնորհեաց առաւտապէս
„զպարգեւս Հոգւոյն սրբոյ յերանելի Առաքեալսն||:
Ա՛ւ յաղօթից խաղաղութեն հայցէ „Ա՛ր հին յառաջ
„քան զյաւիտեանս բանդ Աստ, հակից հօր և արար-
„չակից նը ես Հոգւոյդ. որ և ընախատեղծին ապաւէ-
„նանալութիւն ապաղոյն ձաշակման՝ նշանաւ ամե-
„նայաղթ խաչի քո ի ժամուս յայսմիկ ենթադրեալ
„ի կենդանութիւն վտխեցեր, և զանօրէնութիւնս մեր
„ի նմա քակեալ, կեանք անապական և նորոգումն
„կենաց յուսացեալոց ի քեզ խոստացար. որոց մասնա-
„ւորիլ և զմեզ արժանի արա տէր մեր Յս քս||:

Ինչպես զորս յերգոցն Ընորհալւոյ քաղեցուք առա-
տանօր, և զորան այլոց թողուք որոնել: Ահա և ժա-
մանակաւ զկնի այլ հարցն մերոց գտանի սա. բայց
հոգեբուղխ բանք նորին զարդ եկեղեցւոյն մերոյ լի-
նելով ժողովով դասակարգեալ գտանին ի ժամեր-
գութեանն՝ ի Շարականոցին և ի ժամագրքին,
որք երկուքեան ևս են մասեանք հաւատոյ մերոց,

և միշտ ՚ի քերան հատարակութիւնէ ազգի մերոյ երգա-
բանին։ Ա ՚ոորոյ սիր ցանկալիք ամենից ճանաչելով
խելամուտ գմերաձնեցայն՝ երախտեաց բարերար փըրկ-
չին հանուրց առնել. զի ինքեանք իսկ տեսեալ մակա-
բերեսցեն զպատուիրանազանցիցն պահոց տոյժան, թէ
ինքան թանգագին գնոց կարօտին ազատութիւնէ։ Ու-
թէ ինչպէս թշուառութիւնէ է մարդոյ՝ ընդունայն որկ-
րամոլութիւնէ անպիտան համարիլ զերախտիս անըւգա-
կան քարերարին. որոյ ահեղ աւետին անտարակոյս ու-
նին ներկայանալ՝ թէ ով և իցէ։ Ա.րդ՝ ժամէ տե-
սանել գմարգարտաշաղ զոսկեյեու երգան Ընորհալուին։

"Ա,ախ՝ յԱյսօր անձառի կարգան, զայն՝ որ Հոգ-
ւոյնէ Աստուծոյ հնչէ ,, Ջար կատարած մարդկան
,, լուծիչ, որ կապեցար ընդ կապելոյն. զիս արձակեա
,, յինքնակապէս, ժեղաց կապից դժոխայնոյն. որ ընդ
,, մեղօք պարտաւորին, կացեր անմեղ ՚ի յատենին.
,, յորժամ փառօք գաս հայրենին, ու՛ դատեսցես զիս
,, ընդ նոսին॥ և թէ ,, Պատկառանօք հինն Ադա-
,, մայ, որ ձաղեցար վասն նր. ջնջեա զամօթ մեղաց
,, լըբին, որով զերեսս իմ ծածկեցին॥

Ո՞վ հինի ամ յօդուածոց մեղուցեալ նախանոյն հա-
մակշիռ վիրօք զուժիչ խոստովանելով զնըարելին,
առեալ ՚ի չարչարանաց Քառէ Եմեսոյ գաբաղացւոյ
Սեբերիանոս եպիսկոպոսի, ասէ ,, Ցարձեալ ձեռք
,, ընդ ձեռաց, ոտք ընդ ոտից ընթանալեաց. փայտ ընդ
,, փայտի դառն պատղոյ, կեանք ընդ մահու փոխարկե-
,, լայ॥ և թէ ,, Ուրեմն յերկրորդ ժամու օձին,
,, զկնոտս նախնոյ մօրն Եւայինն. ՚ի վեցն անկեալ մարդն
,, առաջին, հաւանական քանիս նորին. ՚ի սոյն ժամու
,, տէրն ՚ի խաչին, զի քառեսցէ զմեզս նոցին॥ և ա
,, Ասեղնեալ ծառոյ մահաբերին, այն որ քուսաւ ՚ի
,, մէջ դրախտին. փոխան քարձեր զփայտ խաչին, ՚ի
,, գողգոթա հաներ տեղին, ՚ի յուրբաթու ժամերը-
,, ըրդին, քեւեռեցար տէր ՚ի խաչին. լուծեր զկա-

,, պանս նախատեղծին, և կապեցեր զԹշնամին ։ և ես
,, Աերով բնութեամբ զոր զգեցար, ի փայտ խաչին
,, բևեռեցար. լուծանելով զմեզ ի մեղաց, ի նախա-
,, հօրն կապանաց ։ Զրոմանհաղորդ չարչարանօք, ի
,, յանձն առեր զմահ խաչին, և փայտին բարձօղ եղեր
,, վասն Ադամայ նախատեղծին ։

Զարձուցեալ զդէմս աղերսանաց առ ծնօղ բանին՝ առ ,, Կուսին նախնոյ մօրն Եւայէ, յորմէ Ադամն
,, հին պարտի. բարձան անէծքն տրտմական՝ քո առաքն
,, ծննդեամբ կոյս Մարիամ ։ Եւ առ Աստուածն
առ ,, Ադամայ նախահօրն, թէ և եօթն պարզեօք հոգւոյն էր զար-
դարեալ ի առեղծման իւրոյ. սակայն ի միմիայն յար-
գելեալ պատուին ձեռնաձգուի իւր յիմարեցոյց զինքն.
ուստի առ Ընորհալին ,, Պապանձեալ առ դատողին,
,, յետ յանցանաց Ադամն հին. զկինն պատճառ եղ-
,, եալ խաբման, և կինն զօձն դատաձման ։

Ա. յսկիսի պատճառանք ածաստեղծ մարդոյն զինչ բարիս արգասեաց մեզ, ոչ այլ ինչ՝ եթէ ոչ զայս.
,, Աստ երկիրս այս անիծաւ, փուշ և տատասկ ի նմա
,, բուսաւ. վճիռ մահու մարդոյն տուաւ, դառնալ ի
,, հոդ ուստի առեղծաւ ։

Ա. ուրեք զինչ կարեն խորհիլ նարդիս յիմաստուն-

եթէ և՛ի նոցանէ հարցուաքն և քննութիւն ընդդէմ այսքան պատուիրանաց փակեալ պահոց՝ լինէին անօգնական ժամու. կարե՞ն՝ որպ այժմ առ մեզ, ճոռոմաբանել և յայնժամ. թէ և նոքա պապանձեալ կարկին ըստ նախահօրն իւրեանց, կշռեսցեն անձամբ անձին. մեք զընթացս մեր կատարել փութասցուք. զի՛ ի հետևուրդ տանն ասէ ,, Ջնջել փութայր Հայրն փառաց, ,, ուստ, զեւիր պարտեաց մերոյ անցանացոյ. որով զգեցաւ ,, որդին գթած, ի՛ վեց դարուն զմարմին մեղաց. Հօր ,, հաճութեամբ ի՛ մահ խաչին, եկն կամաւ ի՛ յուր- ,, քութին. զառն զենաւ ի՛ հին զատկին, փոխան գա- ,, ռանց օրինակին ||:

Եթէ ունին զայս օրինակ յոյս միաստանգամ հաճեցուցանել զՀայրն փառաց՝ վերստին առաքել զՈրդին գթած ի՛ մահ խաչին վասն դարուս իմաստասիրաց, այնու զանգ նոցին Թերևս տեղի գտեալք, ընդունայն լինին սահմանք հարց, և ժուժկալութիւնք պահեցողաց:

Եւ ի՛ ձայնն ասէ ,, Ոչնեմք զքեզ Հայր անս- ,, կիզբն՝ էից էակ ի՛ յանգից. զարձեր ձեռօք նիւթ ,, ի՛ հողջ, և ստեղծեր մարդ ի՛ պատկեր քո. գլուխն ,, ոտից խոնարհեցաւ, զի զպատուիրան քո մոռացաւ ,, . . . երկնաւորացն անկննելի, եղեր մարդկան ստե- ,, ան եղ. զգեցար պատկեր հողեղինի, պատկերդ Հօր ,, անփոխելի. եղեր յերկրորդ ժամ ի՛ խաչին, վ՚ա Ադա- ,, մայ նախաստեղծին ||:

Ուղղափառ եկեղեցին լուսաւորչակրօնից՝ նախապէս պատուէ զնոք տուաւ ձեռնադրին հին և նոր կտակարանաց. ոչք են հիմունք հաւատալեաց մերոց. զորոց կանխաւ ցուցաք ըստմանէ, թէ մեր քրիստոնէից ամենեցուն՝ սրբապատհուածեան պահքն, սկիզբն ի՛ նոյն նոր տաւէ ծանուցանի՝ իսկ Աձատիր լինելոյն: Յետ յիշեալ ձեռնադրին նոր տաւէ՝ կատարի եկեղեցին, այս՝ ևս ըստ յատկացեալ եկեղեցական մաաենից. ոչք են Հարական, ժամադիրք, ծիսարան կամ Մաշ-

տուց , և պատարագամատոյց կամ խորհրդատեղի :

Ո՛չ երկուց զատաջնոցն մինչև ցաստ գրեցաք զվկայութիւնան՝ վասն պարտեաց նախնոյն , և մեր պարտաւորելոյն ի պահել զպահս : Ա.յժմ քաղել հարկ համարեցայ և ի ձեացելոցն , ք՛ի Մաշտոցէ և ի պատարագամատուցէ . որովք յայտնի կացուցանին , թէ պահքն պարսիակեալ է ի մէջ եկեղեցւոյն մերոյ , ըստ որում հայրենի աւանդ ի յառաքելոց տեղւոջ . որոց հակառակօղք՝ քրէական են յանցաւորք :

Ի Ծիսարան Մաշտոցն , որք պարսիակին առ հասակ մարդոյ հարկաւոր խորհուրդք . որովք ազգ մեր և եկեղեցի ընդ այլ քրիստոնեայս ուղղադաւան ձանաչի : Ո՛ի եօթն խորհրդոցն վեցն նովաւ կատարի , և մինն միայն խորհրդատեղւոյն : Ուրեմն սուրբ ծոլորին առ արարողութիւնք և ծէսք եկեղեցւոյն մերոյ :

Ա.րդ՝ սկիզբն ի մկրտութենէ երեխայից յառաջին աղօթեան հայցէ մայր մեր նը եկեղեցի՝ միջնորդութիւն մկրտօղ քահանային այսպէս ,, Տէր Աստ մեր՝ Աստ ,, բարերար , որ զվերիպեալս և զկեռացեալս ի քէն ,, զաղգս մարդկան , զմերժեալս և զանկեալս ի դրախտ- ,, էն վայելչութեան , ոչ կարացեր անտես առնել : ,, Ա.յլգթացեալ խոնարհեցար ի քումմէ բարձրութէդ ,, ի մեր նուաստութի , առնելով զոլորը զմեր՝ զայց ի ,, մեզաց . չարչարանօք քո՛ և մահու խաչի փրկութիւն ,, մեր և զդարձ գնեալ , վերստին շնորհեցեր մեզ ըզ- ,, կենդանութիւն : Ընկալ և այժմ բարերար տէր ,, զբարեյօժարութի ստեղծուածոյս քո , որ դիմեաց ,, մերձենալ ի նը և ի միայն ճշմարիտ Աստուածդ ,, քո՝ քրիստոնեայ անուն անձին կրելով : Յետ հա- ,, ղորդութեանն խնդրէ ,, Պահեա զսա հաստատուն ի ,, շնորհս քո՝ զոր ետուր . հեռացո զսա ի մոլորութէ ,, թշնամոյն և ի պատրանաց նը , և ի գործոց անօրէ- ,, նութեան . զի լուսով գիտութեան քո գնասցէ ի ետա- ,, պատուհրանս քո , և ուղիղ վարուք հասցէ ի ետա-

,, տացեալ Հանգիստն քո ||:

Ա.Հա ՚ի մանկութենէ կամ յերեխայութենէ հրաժարեալ ՚ի յաւմ պատուիրանազանցութենէց՝ յանձն կաւ ըզկամս Արարչին և զաւմ զպատուիրանս նորա կատարել. և յայնմ հնազանդական հիման վերայ հաստատեցաւ մկրտութիւնէ քրիստոնէութի՚ն նորա: Արդ մարմնաւոր ազգութեան աստիճանաւորք քրիստոնեայ թագաւորաց յաւաջ քան զաստիճան կամ զիշխանութի՚ն ընկալմանցն՝ երդումն առնեն ըստ կանոնաց տէրութեանն՝ մինչ ՚ի մահ հնազանդութիւնէ ծառայել: Այսպէս և մկրտեալքն՝ ըստ վերոյ գրեցելոյն, և երկուց կողմանց պատուիրանազանցքն իրաւամբք դատապարտին:

Տեսէր՝ յերեխայութեան մկրտեցելոց զընկալեալ հնուրհան աղաւթութեան յաւաջին պատուիրանազանցութեանց նախնոյն, և զնոր ուխտադրութի՚ն պատուիրանաւպահութիւնէ ծառայելոյ Աստուծոյ և եկեղեցւոյ. տե՛ս և սա զպատկերոյց պարփակին ընդ պատուիրանօք ՚ի նոյն Մաշտոցի: ,, Ալախատպեցան խնամիք արարչական
,, սէրոյ քո՝ առ արարած քո ՚ի ձեռն միածնի Որդւոյ քո
,, Տեր քո սիրելւոյ՝ ան մերոյ Յի՚ս Քրի՚ստոսի, գալ ծնանիլ
,, ՚ի քեզ կուսէն, և նորոգել զկնութի՚ն առաջնաստեղծ
,, մարդոյն || յորմէ. յայտ է թէ՝ ՚ի պատուիրանազանցութենէ:

{Երկրորդ պատկի աղօթիան սակ ,, Ո՞ խնեցեր գեղեցկազարդ տեսութի՚ն զդրախտին, յորում տնկեցաւ
,, փայտն կենաց. որ և՚ ի վախճան ժամանակի ՚ի ձեռն
,, սրբոյ Որդւոյ քո սիրելւոյ՝ ան մերոյ Յի՚ս Քրի՚ստոսի
,, կենաց փայտիւն աղատեցեր զանկեալն ընդ պատրաստեալ Հանգիստ քո ||:

՚Ի կանոնն Հոգեհանգիստ կատարելոյ յաղօթիան առ Հայրն երկնաւոր՝ ասէ ,, ՚Ո՞ւ տէր Ած մեր յաղթեալ զանցուածս մեր, ետուր զանձինս մեր ՚ի մարդասիրութի՚ն քումմէ, առաքեցեր յանդիման զնին Ծոցոյ քումմէ զմիածին Որդի՚դ քո, որ եկն և կնեաց ՚ի ծառայութենէն մեղաց, և եղև նիւթ

,, զմեզ մարդ , և հրաւիրեաց զմեզ յորդէգրութիւն
,, հօրդ երկնաւորի . մասցց զինքն պատարագ կամօք
,, քովք , և եբարձ զպարտիս մարդկութեանս մերոյ ,
,, հաշտեցուցեալ զտարապրեալս ի քէն՝ ի ձեռն հեղ-
,, մանն արեան իւրոյ . համարեցաւ ընդ մեռեալս՝ ի գե-
,, րեզմանի դնելով անապականաբար . զմահացեալսն ի
,, սկզբանէ կորզեաց ի ձեռաց մահու . յարեաւ սքան-
,, չելապէս , և մշտնջենաւոր կենդանութեն հաղորդս
,, արար զմահկանացու բնութիւնս մեր ||։

Ի կանոնն ջրհոր օրհնելոյ՝ ասէ յաղօթսն ,, Յորոց
,, վերայ ստեղծեալ ի քէն զմարդն իշխան կարգեցեր .
,, խակ ինքնայօժար կամօք չարացեալ դանահարկուն ,
,, պարտեալ զնա վերինէ փառացն . և սերմանեաց
,, ի նա զիւր չարութիւն սերմն ։ Ոյր խնամօք արար-
,, չական ողորմութեան քո զերծուցանել կամեալով ի
,, նորին դաւաճանութենէն , եառ զգրաւոր օրէնս
,, ազգի մարդկան ի դաստիարակութիւն . և զաղագաբա-
,, րոյ մեռս նոցա զգուշացուցանելով ի հեթանոսական
,, սովորութեանց , գրեցեր նոցն զխորհուրդ կերակրոց ||։

Ի կանոնն նոր գինւոյ օրհնեալ՝ ասէ ,, Որ եառ
,, եա սէր ձեր , որ եառ մեզ զպատուիրանս քո
,, սուրբ ի լուսաւորութիւն անձանց մերոց ||։

Ի կարգ թաղմանն առաջին յաղօթսն՝ ասէ ,, Ո՛ւ
,, պատուիրանադրուբ քով զգեցուցեր զնա անամօթ
,, փառօք ի դրախտին փափկութենէ . . . խակ յանցանել
,, նորա զպատուիրանաւ քով , հանեալ եդեր զնա ար-
,, տաքոյ դրախտին փափկութենէ , զգեցուցանելով նմա
,, զմաշկեղէն հանդերձն , զտխրալի և զախտաւոր մար-
,, մինս , և սահմանեցեր հողադարձիլ հողոյն , ուստի
,, առաւ ||։

Ի երկրորդ աղօթից խաղաղութենն՝ ասէ ,, Խակ նա
,, խաբեալ ի չարէն , արտաքսեցաւ ի դրախտէն . և
,, անկաւ յերկիր մահու , և զանիծաբեր կեանս ժա-
,, ռանգեաց ||։

,, սրիկա Թշնամին պատրաստական բանիւք խաբեալ
,, զնա, խրատեաց լուծանել զձեռական հրամանդ. և
,, նորա ունկն եդեալ չարին՝ արտաքսեցաւ ի լուսե-
,, ղէն վտառացն, և փոխանակ անմահութեան՝ մահու
,, եղև ժառանգորդ ըստ արարչական հրամանիդ. . .
,, և ոչ կարացին արարածք հնազանդեցանել զհրամայ-
,, եալն ի բէն||:

Ծառուկք և զբաղումն՝ որք ի Մայր Մաշտոցին ի ձեռնադրութեցն, ի քահանայութեանն, և ի սրբազործութեց եկեղեցւոյ՝ նայն՝ պատկերի և այլոց. յորս հարկաւորք են այսպիսիք վանն պատուհրանազանցութեան, և անտի յառաջ եկեալ պատուհասին հաւասել մի ըստ միոջէ. զի մի՛ ձանձրութիւնս առթեսցէ մեղկացեալ անձանց:

Ա.րդ՝ տեսցուք և՛ ի պատարագամատոյց նորհրդատեառն, թէ ծրագրի հայցուածովք կատարեն զիրկատար նոր նորոգ յաւերժական յիշատակի փրկչին մերոյ:

Ակնզէն յիշատակի ,, Ար բաղմեալ հանգչի յանապատ-
,, ուեաս աթոռոյդմանդ յանձն էառ վա ազգի մարդկան||:

Ընդ սուրբ Աստուածին ,, Ար ի չգոյէ ի գոյ ածեր
,, զամ արարած. որ արարեր զմարդն ըստ պատկերի
,, քումդ և նմանութեէ, և ամ շնորհս քոյ զնա զար-
,, դարեցեր, և ուսուցեր խնդրել զնմանատութիւն և
,, զգօնութիւ. և ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ
,, եղեր ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութէ||:

ի Նիկիական դաւանութեանն ,, Ար յարգագ մեր
,, մարդկան և վասն մերոյ փրկութէ ելեալ ի յերկնից,
,, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալսկս ի
,, Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով. . . չար-
,, չարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝ յերրորդ աւուր յա-
,, րուցեալ. . .||:

Հաղօթան առա ,, Ար զոր քոյին կամաւ ի ժամուս
,, յայսմիկ համբերեցեր չարչարանաց, խաչն և մահու
,, յաղագս մերոց մերոյ||:

Յառաջ քան զՍուրբ ասէն ,, Ար քոյին անշննել և
,, արարչակից բանիւդ զանիծից գարձեր զկրճին .
,, Նոր ժողովուրդ ինքեան տուեալ, զեկեղեցի սեպհա-
,, կանեաց զհաւատացեալս ի քեզ ||:

Ընդ երեքսրբեանին ,, Սուրբ ոչ ոք ես ճշմարտա-
,, պէս և ամենաւրէն . և ոչ ոք պանծացի քովանդակել
,, քանիւ զքո ի մեզ զամբաւ քարեգթութեան զեր-
,, մունս , որ և անդէն իսկ ի նախնուանն զանկեալն ընդ
,, մեղաց , զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր՝
,, մարգարէիւք , օրինացն տուչութբբ , քահանայուբբ ,
,, և ատուերակերպ երնջոցն մատուցմամբ : Իսկ ի վախ
,, ճան աւուրցս այսոցիկ զքովանդակ իսկ զպարտեաց
,, մերոց խզեալ զդատակնիք , և ետուր մեզ զՈրդիդ
,, քո միածին պարտապան և պարտս , զբնուանն և օծ-
,, եալ , գառն և երկնաւոր հաց , քահանայապետ և
,, պատարագ : Ոյն զի ինքնդ ես քաշխօղ , և նոյն
,, ինքնդ քաշխի ի մէջ մերում միշտ անձանձրոյ ||:

Ոյամէ ասել խուն ինչ և առանձին ի հոգեբնկալ
չարեցն մերոց , որ ըստ ուղիղ խղճի մտաց շարժեալք ,
մեզ ի խրատ՝ գրեցին ի գիրս անձնիւրքն , և թողին
աւանդ հայրենի սպասգայից . զի մեր ի նոցունց ուս-
եալ քանիցն , զորդիս մեր յայնս կրթեսցուք յաճախաշ-
տուքի ըստ Առաքելոյն՝ * հաւատ ի լոյ է , և լոր ի
քանէն գնալի || : Ո՞ի եթէ ոք ոչ լուիցէ , զինաղդ կա-
րասցէ գիտել . և թէ ոչ գիտասցէ , զինչ ուն ի ուսու-
ցանել ուրդոց իւրոց : Վանզի հաւատք և հաւատա-
լիքն մեր հազարաւոր ամենիւք են սահմանք . և ոչ զնե
կարէ մեզ մերձաւորս առնել , եթէ ոչ՝ գրաւորեալքն ||:
Ոպա ըստ Ա՝ հարկ է շնորհապարտ լինիլ յայնց հարց ,
որ թողեալ են յետնոցս զհոգեւոյն իւրեանց զօժիտ :

Ոթէ յատկապէս նկատեսցուք յազգ մեր , յետ
առաջին լուսաւորութեանց մերոց ի Թադէոս և ի
Բարդուղիմէոս առաքելոց օրինակաց և խրատուց՝ ընդ
այլ պատուիրանացն՝ և պահոց կատարեալ հեղինակուքն

եղև ի՝ աջ Լուսաւորչէն մերմէ , որ յետ ի վերապէն վաթսունօրեայ ժամանակօք սրբեաց զարքայն Տրդատ պալատայնովք , զօրօք և ժողովրդովք , օրինակաւ սրբեցեալ անձին իւրոյ . և կայսին յակճիռս յաճախութեան քարոզուԹի իւր : Որոց կանոնադրեալ՝ հինգ օր անսուաղուԹիք նուաճել զըմբոստուԹի անսանձ կրթեալ դիւցասէր մարմնոյ իւրեանց . և ապա մինչ ի բժշկուԹիւն յախտից կալ ընդ իւր ի սրբապահուԹե :

Ասաի եղև սովորուԹիւն յազգ մեր զհինն պահոց կոչել Առաջաւոր . զի այն է սկզբնաւորուԹիւն մերս պահոց , և անտի աղուհացքն քառասնորդաց . և այլքն ի Յովհան Մանդակունւոյ կարգադրեցեալ ընդ ժամերգուԹեանցն մերոց , որք ընդ կանոնաւ սրբոց Հայրապետաց՝ յիշեցան ի վերոյ :

Այս մեր ասացելոցս զհաւաստուԹի ի՝ աջ Լուսաւորչէ ունիլ զսահմանադրուԹիւն Առաջաւորացն պահոց , ահա և Ընորհալին ի պատասխանատուուԹենն առ կայսրն Յունաց կիւռ Մանուէլ յետ այլոց քանիցն՝ գրէ զհետևեալսն այսպէս ,, Ա. յԼմեք՝ զի Առաջաւոր անուանեմք զպահսն զայն , առաջինն այս է ,, պատճառն՝ զի յառաջ գոլով քան զպահսն քառասնորդաց , ,, դաց , և ոչ զկարապետ նախընթաց է նմին . երկրորդ՝ ,, զի Հայաստանեայցս ազգի առաջին այն են պահք ի ,, սրբոյն Գրիգորէ հաստատեալ . յորժամ ելն ի վերոյ ,, րապէն , անսուաղուԹիք կեալ՝ օրինադրելով հար- ,, ուածելոցն՝ զաւուրս հինգ յաղագս պատուհասին ,, եղելոյ՝ բժշկուԹեան : Ա՝ անորոյ և բազումք ըստ ,, նախնեացն սովորուԹե՝ ծոմապահուԹիք զաւուրսն ,, զայնոսիկ անցուցանեն . զոր և յետոյ պատշաճ հա- ,, մարեցան , ընդ Նինուէացւոցն պահոց՝ զայս կարգել ,, պահք . ըստ Ասորւոցն և Եգիպտացւոցն , ոչ և պա- ,, հեն սրբուԹիք : Իսկ այն՝ զի յետ կատարման պա- ,, հոցն , զսրբոյն Սարգսի զօրավարի կատարեմք զյի- ,, շատակ , այս է պատճառն . քանզի զհինն ժամանակի

,, ՚ի նոյն թիւ ամսոյ ՚ի յերեսուն յունվարի կատարե-
,, ցաւ նա վկայական արեամբն վե՛ր գ՛ալ • վե՛ այսորիկ
,, սահմանեցին յաւուր շաբաթուն այնորիկ՝ զնորայն
,, տօնի կատարել զյիշատակ • ոչ յաւաջին շաբաթու
,, քառասնօրդացն զսրբոյն Թէոդորոսի տօնախմբեն
,, զօր յիշատակի ա՛մ հաւատացեալք ՚ի գ՛ա։

Եւ ահա ծանուցաւ յազգ մեր լինիլն նախաշա-
ւիղ պահոցս նոյն ինքն բազմաչարչար վկայն գ՛ալ
սուրբն Գրիգոր լուսաւորիչ հայրն մեր, զորմէ ՚ի
յԱգաթանգեղոսն և՚ի Յաճախապատմութեանն զբա-
զումն՝ բազմապատիկ օգտակար վարդապետութեամբ
՚ինոյն իսկ երախտաւոր հօրէ մերմէ՝ ուսին երկիւղած
բանասէրք քաղել զնորատ պահոց։

՚Նոյնպէս և զբոլոր Աղօթամատոյց որք մատեանն ՚ի
մարմնի հրեշտակատիպ կենցաղավարեալ սրբոյն Գրի-
գորի Նարեկացւոյ՝ եթէ աւագ աչօք ջերմեռանդն ՚ի
հաւատալիս, համարեսցի գլխովին յօրինեալ վե՛ պահոց
պատուիրանազանցութեան լծընկէց Արմատոյն մերոյ՝
ոչ թերահաւատի։ ՚Քանզի հարազատ ցաւակից որ-
դիս այս նախահօրն, զկնի փրկչին տիեզերաց՝ զա՛մ
յանցանն նախնւոյն յինքն վերաբերեալ ըստ օրինա-
կին գ՛ալ, հրեղէն լեզուաւ բանահիւսէ զայն սուրբ
մատեան զվերաձայնեալն և՚ս Նարեկ • որպէս յերրորդ
ձառին պարզաբար ասէ ,, ՚Ու՛ք քանզի աւա՛մ հասակ
,, տնկեցեալ յերկրի աղտ բանականաց՝ այս պատուէր
,, նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի, որ
,, զամենեցունց ունի զկրից պատահմանց, նշաւակեալ
,, յիւրում պատկերի, իբր կցորդ մեծագիտական
,, կարեաց համայնից աւրբոլոր գումարս բազմահոլով
,, տիեզերակոյտ քրիստոնէից։

՚Ի յորրորդ ձառին ,, ՚Նոյզի՝ և չի՛ք իսկ բժշկու-թի՛ն
,, բազմավտանգ ապստկութեան վերացս անողջանալի,
,, խայթմանց խաճուածոց մահաբերին բերանոց ժան-
,, եաց՝ որսոյլին զանձն իմ՚ի կորուստ։

Նրեք այսուհանդերձ ոչինչ չասելց պարտավորեալ
համարիմ ինձ ընդ ընթերցողն կրկնակի խրատել զայն
զոր ինչ կարեկ նախատես համարիմ առաջեն քան
զայլ ինչ խրատել, եթե ոչ զանձարանն զայն մատ-
եան՝ վերստին օրինակել առ ի խրատս ընդդիմակաց
պահոց, և պատուիրանազանցից, Նա մեզ անկարեաւ
զայնս առնել գիտելով՝ միայն ոչ կէ գլխոյ չարչարանաց
չասէ և եթե զայն քան նկարագրելով առաւելս, թող-
ցուք ի կամս քննողաց զայնմանէ հաս-
մայն, ուր առ վանս փրկչին ,, Նրեք ոչ էր արբեալ
,, կրկնակի քացախ զանգեալ ընդ լեղւոյ , ոչ էր հեղ-
,, եալ մարգն իմ մթերեալ նախանձ զառնութեանն ||
Նրեք էակոն քանն չօր մարդացեալն Ա՛ (առանց
ընդելոյ կրկնակի քացախ զանգեալ ընդ լեղւոյ) այլ
անօրէնութիւնն, այսինքն ծննդեամբ, թլփատութիւ ,
խանձարուրապատութիւ , տարագրութիւ տեղւոյն ի տե-
ղիս, նախատանօք, չարչարանօք, խաչիւ, առաւակօք ,
ոտնաձեռն գրեամբ, փշեայ պսակօք, ձաղանօք , խա-
չիւ , կողահար արեամբ և ջրով , մահուամբ և թաղ-
մամբ . այս ամ առաջանօք ոչ հետզհետ զնախանձ մթեր-
եալ զառնութիւնն՝ այլ՝ միանգամ խրատեալ , զի նախանձն
ի բերանն էառ զձաշակ պատուիրանազանցութեան , և
եղև նմա զառնացեալ մարգ ։

Իսկ պատուհասացյ փրկիչն այլսեռ վճարեալն էզ
նոյն՝ անհամաձայն գառնէր սեպհական պարտուց
պարտաւորին ։ Ա՛ ան որոյ հրատարակէ հոգւոյն
խորհրդոյն առ ,, Նրեք ոչ էր արբեալ կրկնակի քա-
,, ցախ զանգեալ ընդ լեղւոյ , ոչ էր հեղեալ մարգն իմ
,, մթերեալ նախանձ զառնութե || ։ Ո՞ի վճռեալ իսկ
էր՝ որով ոք մեղանչէ , նովինքն և տանջի ։ Վ՛ադաւ ե-
րանալ և կոխոտութիւն էր մեղուցեալ մարդկան որպէս
Ադամայ պատուհասն վարկաւ զառնութիւն լեղւոյն նոյնպէս
եբերանալ և կոխոտութիւն համարձակութեանն հոգւոյն
պարտուցն ։

Այս ինչ առաւել արժանապատիւք՝ դէմըդէմ Տողոց, հարստութիւնք մարդկանց՝ արծաթ և ոսկի, համարին մեզ. որոց յուսով զաճապադիր զամսանս պահոց կատարեալ, բերանով մերով ձայնակեալք զկորստական ախորժելիսն, և զանաւրէնսն՝ այլ առաքինութեամբ, այսինքն արուեստ անանկաց և ողորմութիւն կարեմք զայս որկրամոլութիւն քաւել, երբ տեսանեմք՝ թէ զնոսին այլ անօրէնութիւնքն՝ այնմ ոչ կշռեցին զչափ հատուցմանցն, եթէ ոչ՝ ձայնակ գառնութիւն լեղւոյն։ Ասաք Առաքեալն Տրամայէ սիրելւոյն իւր Տիմոթէոսի * Մի՛ դիր ընթերցուածոց միխիթարութեան վարդապետութիւն (ա. տիմ. դ. 13)։ և թէ՝ * Ան մի՛ ձգէ անկանել՛ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ (էբր. ժ. 31)։

Ա՛ման այսպիսիկ ջահն եկեղեցւոյն մերոյ՝ նեղսիտս ընտրհալն Հայրապետն մեր յընդհանրական խրատուն առ իշխանս՝ որ ըստ աշխարհի, պատուիրէ։ ,, Ա՛ի և ,, զպահս հատուցող լուծանէք՛ի ձուկն և՛ի գինի՝ իշ- ,, խանաձար. զի մի՛ ընդ անժուժկալսն դատիցիք ‖։

Եւ Ոսկեբերանն քաղցրատուրթ խելամուտ առնէ ,, Եթէ՛ի դրախտին պիտոյ էրէն պահք, ոչըչափ ևս ,, առաւել արտաքոյ դրախտին ‖։ և թէ՝ ,, Ա՛արգիա- ,, ւոր պահքն են ժուժկալել՛ի կերակրոյ, և հոգևոր ,, պահք են հրաժարիլ՛ի մեղաց. որով արդեան ,, արդութիւն վարուց, և արդութիւն կերակրոյ ‖։

Զայնպէս սուրբն Բարսեղ կեսարիոյ Հայրապետն գրէ ,, Պահք սանձ են. որով վարէ հոգին զմարմինն ,, որպէս կառավար զերիվարս, և չթողու գահավէժ բե- ,, րել ‖։ Եւ առլով օրինակ զսուխտաւորն Աստուծոյ ,, զՍամփսոն՝ ասէ ,, Սամփսոն՝ պահօք յղացաւ և ,, եհաս՛ի չափ։

Սուրբն Կիպրիանոս ասէ ,, Պահօք շինչանի զորքդ ,, հրամայեա լերինն երանեայ. հալածական լինին հե- ,, ռութիւնքն, և թողչին ամ ցանկութիւնք ‖։

Սուրբն Ցաւկոբ Մծբնոյ Հայրապետն յերկրորդ ձա-

ուին ասէ ,, Ընտրեալն պահէ՛ք զքաջ սուսերի Ա՛յ ||։

Այս Ընտրհալին զբազում տեսակս պահոց ՚ի մէջ ամփոփէ , զի մի՛ միայն վասն նախնւոյն կարծեսցեն զգ պատուհրանն , յասելն ,, Զ՚ի պատուիրանն էր նոցա ,, մին , վասն միոյ դառն պտղին . իսկ ինձ բազումք ,, քարոզին , վասն բազմաց զիս սպանողին ||։

Այս մեկնիչն կաթուղիկեաց ոսկիաբերանն Սարգիս յեօթնեբոլոր Ճառի յորդորակն գԵսայեայ ՚ի վեր քան՚ց Սաղմոսողին ,, Ա՛յ ինձ , զի ընդ երկար եղև պան- ,, դխտութիւն իմ , զի գնակեցայ ՚ի վրանս խաւարի , ,, տակ ,, Ա՛յ զի արդարև խաւար է աստի կենցաղս ,, և խաւարեցուցիչ որոց անմտաբար ՚ի սմա քաղաքա- ,, վարին . և զօրէն անասնոց ՚ի սմա շրջին , պարտոյ և ,, որովայնի ծառայելով ||։ Այս ըստ որում քաջ սե- ,, ուսէ , միացեալ ընդ հիւանդն՝ ասէ ,, Ա՛ոդ՝ մի՛ ,, անմտացուք իբրև զանասուն , և մի՛ զպատիւն մեր ,, կորուսցուք . . . եթէ ես ասէ , կարծեցեալ կանոնս ,, մարդկան՝ այսպիսի . զինչ կայս ասա այնոցիկ՝ որք ,, ազխտութիւնք խաւարեալք են , և՛ի գրոց միխիթարուէ ,, զրկեալք և անձաշակք երկնաւոր բարեացն , և միշտ ,, ՚ի մարմնականս զբաղեալ կան , և զօրէն ձգեաց ՚ի ,, տղմի կայտառան , ոմն որովայնին ծառայելով , և ոմն ,, վաճառս ցանկութեանցն ||։

Ա՛հաւասիկ ՚ի կանոնացն ակեալ մինչև ցայս վայր առացեալքն էր որ յընդհանրական ժողովոց վճռեալք վասն պահոց բանէ , էր որ ՚ի մասնաւոր ազգային ժո- ղովոց . էր որ ՚ի հարցն Յունաց , և էր որ ՚ի յաւելեալ մեր Հայրապետաց ծաղկաքաղք հաւաքեալք՝ փունջ մի կազմեցան , առ ձեռն պատրաստ լուսաւոր- չակաց երկիւղածելոյ ազգի մերում սիրելոյ . զի մի՛ ՚ի բազում մատեանս հնոց Հարց և Վարդապետացն ձշմարտութիւն դժպիրիլ հոգս նոցա լինիցի , նախ՝ զան- ձինան կրթելոյ յերկիւղն Աստուծոյ , և ապա ընդ- մանկացն պատրաստ պատասխանելոյ ։

Ա. Յև գիտեմ՝ զի Ճարտասանք են նոքա, ուսեալք զձեռնարկուածս՝ փոխել զենթակայն, և այնու պատրել զբազումս, ասելով մի ե՛ւ ոչ, և Առաքեալք նորին աշակերտք. զի թէ մեզ Լուսաւորչակրօնից և Ցուցաց մեծ եղբարց մերոց քարոզեալ պատուիրեցին, ըստ գրեցեալդ արբասպահութեան չոր պահս, Այլ Յեւրոպայն ընդարձակ թագաւորութեամբ և լուսով մատց Ծագիեալ, զիարդ և առնոսա ոչ ժամանեալ ոչ ժամանել

Նաց և մարմնաւորականաց խաւերախն ստանձակուտոր արձակերասանութիւնն է խոչընդոտն նոյն մաքրագործ պահոց։

Ա՝ սան այսորիկ պատշաճ վարկաք և զնոցին ԵՐՐորդւոց զնախանձ չարեցն զջերմեռանդ քարոզըն պահոց՝ ծանկնաքաղ առնել աստանօր ըստ կարեաց։ Այս զայլ ընդարձակ ձառ և զդրուատան վասն պահոց՝ թողուլ նոյն ԵՐորդւոյն ուսմամբ՝ որ գրոց լուսաւորեալ անձանց գտանել, որ մօտ ծասքել, հոգւով տեսանել, և աշմարտութիւք քարոզել աշխարհային իմաստանացէլոց, ըստ երկրաւնական հրամանին։ * Ողջոյն ձեր եղիցին ձեր գաւառուրք (Ֆաս. ԺԲ. 27)։ Վասնզի ամօք ծանօթից և ազգայնոց դիւրաւ ունկնդիր լինի՝ ի սկիզբն, քան անծանօթ օտարաց։ Այս երբ՝ ի ծանօթից կրթի քարեպէս, ապա և զայլոցն քննէ մտադիւրաբար։

Արեւս նպաստակ՝ ոչէ զայլածէս եղբարան խրատել, այլ զմերազնեայն միամտեցուցանել. թէ մի և նոյն է Աստուածատիրը հրամանն պահոց ընդհանուր կաթուղիկէ եկեղեցւոյ։ Այս ցուցանելով զվկայութի՝ ի՝ նոցունց, զառնամբ զհետաքրքրութիւս մերազանց։

Աստուածահայր մարգարէ թագաւորացն Դաւիթ՝ ի դիմաց անարատ մօր մերոյ աբ եկեղեցւոյն, և ի քաւչարար արբուքենց ենթակայ պահոց աղաղակէ՝ * Ամաչեսցեն և յամօթ լինիցին որք խնդային ընդ իմ զգ. զեցցին զամօթ և զանարգանս՝ որք մեծաբանէին ի վերայ իմ (սաղ. լէ. 26)։ Այս այլ մարգարէ՝ * Տեսէք արհամարհուտք՝ և հայեցարուք, և զարմացարուք զարմանս՝ և եղծարուք . . . որում ոչ հաւատայցէք՝ թէպէտ և ոք պատմեսցէ ձեզ (ամբ. ա. 5)։

Վկայութիք պահոց ի գրոց և ի վարդապետացն Լատինացւոց։

Օ՛ի ահա եղծեալ զեղծանին կոյս և ապաւէն ա-
պաւտանարանցն ձեր ամենեցուն։ Եւ առաջին հարքն
Լատինացւոց ո՛չ միայն բարոյականապէս՝ ըստ վարդա-
պետաց բարձեալ, այլ և ծածաբանական եղանակօք սահ-
մանեն ապացուցուածքն զփրկանաւորութէն գահոց մին
քան զմին գերագոյն աղդու զօրութէքն . և առ այլ ո՞
կուսացեալ մնայք։

Եւ առաջին յածաբանս նոցին Թովմա՝ հանդերձ պաշ-
տօնիւք և վախճանական կատուածքն զորկրամոլութէնն
սահմանէ այսպէս ,, Որկրամոլութէնն է անկարգ ցան-
,, կութէն ի հեշտալից ճաշակելեաց. և ըստ այնմ հեռա-
,, նայ ի կարգէ բանականին , նմին իւրն կոչի մեղք։
Կրեալ է՝ * Սաղմոս ասացէք , և ի մի՛տ առէք։ և
թէ՝ * Մի՛ա դիր ընթերցուածոց գրոց։ Յե՛ս թէ՝ ի
սահմանիս յայսմիկ զինչ՝ մեծ վարդապետն Թովմաս
ասէ. ո՛չ միայն զանկարգութէն որկրամոլութէնն ճառէ ,
այլ զկրթեալսն նովաւ տարեմերժելով ի բանականու-
թէէ , զվախճանականն հաստատէ լինիլ մեղք։ Կանգն
եթէ նախադասութէքն ձեռնարկէ ոք այսպէս ,, Որ ինչ
,, զԱստուած քարկացուցանէ , է՛ մեղք . անհնազան-
,, դութէն պատուիրանացն Աստուծոյ քարկացուցանէ
,, զնա . որկրամոլութէնն է անհնազանդութէն պատուի-
,, րանացն Աստուծոյ , ապա որկրամոլութէնն է մեղք։
Կ՛այնպէս եթէ ըստ ներգործութէքն մեղաց ձեռ-
նարկէ ,, Որ ինչ որոշէ զմեզ ի խնամոցն Աստուծոյ ,
,, է չար . մեղքն որոշէ ի մէջ մեր և Աստուծոյ , ապա
,, մեղքն է չար։

Եւ ա՛մ չար՝ տանջելի է . ահա ա՛ծ գիտելով զորկ-
րամոլութէնն Ադամայ լինիլ չար , հրամայէ զտանջանս
նորա՝ * Յորմէ պատուիրեցի քեզ չուտել , կերբե՛ր ար-
դեօք ի նմանէ . անիծեա՛լ լեցի երկիր ի գործս քո։
Օ՛ինչ աւելի քան զայս տանջանք , որ սերմանէ
նախահայրն աշխարհի . զի գոնէ զվաստակս ձեռաց
կերիցէ . փոխանակ կորուսեալ անաշխատ վայրկին՝ և

երկիրն քուստուցանէ նմա վուշ և ատատասկ։ Եւ որք
ունէր քնաւ պէտս քրտանց և աշխատանաց ըստ նըշ-
գրիգորի նարեկացւոյ հրեշտակաբարբառ մեկնուԹեն
Երգերգոյն յայն քան՝ Թէ * Որդիք մօր իմոյ մար-
տեան ընդ իս . և եդին զիս պահապան այգեստանի ,
զի զայգին իմ ոչ պահեցի , ասէ ։ ,, Ա. յս այն է՝ որ
,, ասէ , Թէ եղ զնա Ած ՚ի դրախտին փափկուԹեան
,, գործել զնա և պահել . ոչ Եթէ գործոց ինչ կամ
,, պահպանուԹեան պէտս ունէր դրախտն , ուր Ած
,, վայելչուԹի և Ածային պահպանուԹի էր . այլ գոր-
,, ծել զարդարուԹի , և պահել զպատուէրսն յառա-
,, ջագոյն վարդապետեաց ։ Եւ հետևօղ սրբոյս շնոր-
հալին Ներսէս գրէ ,, Ընդ անաշխատ կենաց վայրին ,
,, որ ընդ յուսոյն Թեթևասցին . ուստեմք քրտամբք
,, զառօրեկին , դառնամք ՚ի հուլ՝ ուստի առեալ ։

Ա՚նգիտ ոմիկրամոլուԹին՝ հարուածատ եղբայր է արբ-
